

# Կրթություն

Շաբաթաթերթ «Krtutian» (education) weekly «Кртутіан» (образование) еженедельник 22.02.2023թ. չորեքշաբթի թիվ 8 (1085)

## Կարդա՛

## Մայրենի

## Արցախ

### Իրական ու անհերքելի

Արցախյան շարժման 35-ամյակը 88-ին այսպես չէր երևում... համաժողովրդական զարթոնքն ու ազատության բաղձանքին հասնելու աստեղային ժամը պանծալի գալիք էր նախանշում, այն էլ դարերով չափվող...

Շարժմանը հենց առաջին ցույցից մասնակցողի եւ իմ փոքրիկ հայրենիքին պատուհասած ամեն աղետը ցմրուր ապրողի իրավունքով են ասում... եւ ինքս ինձ տուժողության կոչելով վերստին հավատում Արցախի ազատությանը:

Հարունակությունը՝ էջ 6

### Աշխարհի հետ

### Համագործակցության ծրագրեր

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար **Ժաննա Անդրեասյանն** ընդունել է Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարի տեղակալ **Բյորն Բերգեի** գլխավորած պատվիրակությանը:

Հանդիպմանը ներկա են եղել ԿԳՄՍ նախարարի տեղակալներ **Արթուր Մարտիրոսյանն** ու **Արաքսիա Սվաջյանը**, ԵՄ ներկայացուցիչներ:

ԿԳՄՍ նախարարը, ողջունելով հյուրերին, կարեւորել է Հայաստանի համար Եվրոպայի խորհրդի 2023-2026 թթ. գործողությունների ծրագրի մեկնարկը եւ ընդգծել՝ նախարարությունն ակտիվորեն ներգրավված է ԵՄ մի շարք հարթակներում, ինչը բազմաթիվ համատեղ ծրագրերի իրականացման հնարավորություն է տալիս կրթության, գիտության, մշակույթի, սպորտի եւ երիտասարդության ոլորտներում:

Հարունակությունը՝ էջ 2

### Քննարկում

### ոլորտի շահառուների հետ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը Ասիական զարգացման բանկի եւ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի հետ համատեղ նախաձեռնել է «ՀՀ կրթության մինչեւ 2030 թվականի զարգացման պետական ծրագրերը հաստատելու մասին» օրենքից բխող գործողությունների ծրագրի» նախագծի հանրային քննարկում:

Հարունակությունը՝ էջ 4

### Գիրք նվիրի

### Նաեւ բրայլյան այբուբենով

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար **Ժաննա Անդրեասյանը** եւ նախարարի տեղակալ **Արաքսիա Սվաջյանը** Գիրք նվիրելու օրվա շրջանակում այցելել են Երեւանի Նիկողայոս Տիգրանյանի անվան տեսողության խանգարումներ ունեցող երեխաների թիվ 14 հատուկ դպրոց:

Նախարարը դպրոցի գրադարանին նվիրել է բրայլյան գրքեր՝ Ստեփան Զորյանի պատմվածքները եւ աուդիոգրքեր՝ օտար գրողների ստեղծագործություններ, որոնք նախատեսված են դպրոցական ծրագրով ընթերցանության համար:

Հարունակությունը՝ էջ 3



«Օ՛, գրքերի աշխարհը տիեզերք է անեզր», - ասում է **Բանաստեղծը**: Իսկ նրանից շատ առաջ **Առաքյալն** է հաստատել. «Յուրաքանչյուր գիրք սուրբ է»:

5-րդ դարում մենք որոշեցինք մեր ազգային ինքնությունը եւ դեպի հավերժություն մեր ինքնատեսակ երթը ամրագրել **գրապաշտությանը**: **Ոսկեդար** վերտառությանը մեր պատմության մեջ ոսկե էջ դարձած ժամանակահատվածում վերականգնեցինք **Հայոց այբուբենը**, թարգմանեցինք **Աստվածաշունչը**, հիմնեցինք դպրոցներ... Հետագա 1600 - ամյա նորագույն դպրությանը փրկեցինք մոռացումից մեր անցյալի փառքը, աշխարհաստեղծման օրից **Աստծուց** ժառանգած ողջ բանական սերուցքը, որ կազմավորվող մարդկության քաղաքակիրթ զարգացման ատաղձը եւ առանցքը դարձավ...

Ամեն հայ գիտնականի խորհուրդը, այստեղ պահպանվող հազարավոր ձեռագրերից յուրաքանչյուրի անգին արժեքը... **Սեղապարտ Հակոբի** շնորհիվ մեզանում **տպագրության** սկզբնավորումից ի վեր դրանցից հարյուրավորները եւ նոր ստեղծված գիտական ու գեղարվեստական բյուր գոհարներ գրքի տեսքով դրվեցին Ազգի սեղանին: **Գիրքը** մեզ համար, ինչպես մեր գոյության բոլոր ժամանակներում անընդմեջ, մնաց որպես սրբազան մասունք՝ անկախ իր պարունակած էությունից (հիշենք «Մշո ճարընտիր» մատյանի եւ գրային այլ հայտնի ճակատագրեր):

Արդ. մեր **պատմության** հանգրվաններով, ազգային ազատագրական պայքարի **հերոսական** կենսագրությամբ, ինքնատիպ **հզոր** մշակույթի արարման անվիճելի իրողությամբ ծանրաբեռ՝ այսօր կանգնած ենք նոր ժամանակների մարտահրավերների հանդիման: Եւ, ուզենք, թե չուզենք, դարձյալ պիտի ապավինենք Նորին մեծություն **Գրքին**, որովհետեւ նա՛ է մեր անպարտելի զենքը բոլոր ժամանակների համար, որովհետեւ մեր էական արժեքն ու բովանդակությունը, թե՛ իբրեւ անհատ մարդ, թե՛ իբրեւ հավաքական ժողովուրդ, **Աստծո** կամքով եղել ու մնում է **բանականությունը**՝ իր բոլոր ելեւէջներով. արհեստից մինչեւ կրթություն, արվեստից մինչեւ գիտություն, իբրեւ **աշխատանք, ստեղծագործելու շնորհքով օժտված բանական արարածի բնական գոյություն...** Ուրեմն, որպես 11-րդ **պատգամ** ենթարկվենք «Կարդա՛» հորդորին՝ աներեր հավատով ապավինելով **Գրքին**՝ որպես **լապտեր մեր բոլոր ճանապարհների համար**:

Գ. Մ.

\* \* \*

Հովհաննես Թումանյանի ծննդյան օրը՝ փետրվարի 19-ը, ՀՀ գրողների միության նախկին նախագահ, երջանկահիշատակ **Լեւոն Անանյանի** նախաձեռնությամբ, տարիներ առաջ մեզանում սկսվեց նշել, որպես **գիրք նվիրելու օր**:



Առաջին բառը, որ արտաբերում ես քո թոթով լեզվով,

Առաջին միտքը, որ հղանում ես աշխարհաճանաչման քո արշալույսին, Առաջին դրվագը, որ ազուցում ես հուշերիդ շղթային,

Առաջին տողը, որ գրում ես, Առաջին գիրքը, որ կարդում ես, Առաջին սերը, որ զգում ես, Առաջին օրը, որ ապրում ես, Աղոթքդ առաջին, Զարմանքդ առաջին, Կասկածդ առաջին, Առաջին նկատումդ, Առաջին ընկալումդ, Հայտնագործումդ ու բացահայտումդ առաջին...

Ու այս ամենը՝ անվերջ, անընդհատ, նորից ու դարձյալ՝ մի ամբողջ կյանք՝ մինչեւ շունչդ վերջին...

Քո սկիզբը,  
Քո ընթացքը,  
Քո էությունը՝  
Քո մայրենի լեզուն:

Գ.Մ.

տե՛ս՝ նաեւ էջ 8-9



**Փետրվարի 21-ը** նշվում է՝ որպես **Մայրենիի միջազգային օր**: Օրվա կապակցությամբ՝ պատշաճ միջոցառումների պակաս չեղավ մեր հայրենիքի բոլոր կրթօջախներում:

տե՛ս՝ նաեւ էջ 7, 8-9



Աշխարհի հետ

Համագործակցության ծրագրեր

Նախանշելով հետագա անելիքները

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը եւ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը հանդիպել են ՀՀ-ում Չեխիայի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Պետր Պիրունչիկին՝ քննարկելու երկկողմ համագործակցության ամրապնդմանն ուղղված քայլերն ու զարգացման հնարավորությունները:



Ժաննա Անդրեասյանը, ողջունելով դեսպանին, նշել է, որ հանդիպումը լավ առիթ է՝ երկու երկրների միջև համագործակցության շրջանակում նախանշելու հետագա անելիքները:

Ըստ նախարարի՝ համատեղ մի շարք ծրագրերի ուղղությամբ առկա է բավական մեծ առաջընթաց, մասնավորապես՝ շարունակվում են իրականացվել «ՀՀ կառավարության եւ Չեխիայի Հանրապետության կառավարության միջև մշակույթի, կրթության, երիտասարդության, գիտության եւ սպորտի բնագավառներում համագործակցության մասին» գործող համաձայնագրով ամրագրված գործողությունները:

Նախարարը նաեւ տեղեկացրել է, որ մշակվել են չեխական կողմին է փոխանցվել «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության ու Չեխիայի Հանրապետության կրթության, երիտասարդության եւ սպորտի նախարարության միջև կրթության եւ գիտության բնագավառներում համագործակցության մասին» համաձայնագրի երկարաժամանակ նախագիծը, որով երկկողմ համագործակցությունը կշարունակվի՝ զարգացման հեռանկարով:

«ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը հետևողական աշխատանք է իրականացնում օտարերկրյա պետությունների համալսարաններում, թանգարան-ինստիտուտներում եւ կենտրոններում հայերենի ու հայագիտական առարկաների դասավանդման, ինչպես նաեւ հայագիտական հետազոտությունների խթանման ուղղությամբ: Ըստ այդմ արտերկրում գործող մեկ տասնյակից ավելի հայագիտական կենտրոններ ՀՀ պետական բյուջեից ստացել են ֆինանսավորում: Ուրախությամբ պետք է նշենք, որ 2022 թ. նոյեմբերին ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը ստորագրել է հուշագիր, ըստ որի՝ Բռնոյի Սասարիկի համալսարանում հիմնադրվել է հայագիտական կենտրոնը»,- նշել է նախարարը:

ՀՀ-ում Չեխիայի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպանը եւս կարելու է երկու երկրների եւ համալսարանների միջև կապերը, վստահեցրել, որ պատրաստ են օժանդակել դրանց ամրապնդմանն ու ընդլայնմանը:

Կողմերն անդրադարձել են ուսանողների փոխանակման, միջպետական կրթաթոշակների տրամադրման ծրագրերին, երկկողմ հետաքրքրություններ կայացնող այլ հարցերի:

ՀՀ ԿԳՄՍ հասարակայնության հետ կապերի եւ տեղեկատվության վարչություն

սկիզբը՝ էջ 1

Ժաննա Անդրեասյանը նշել է, որ Հայաստանի Հանրապետությունը եւս տարբեր փաստաթղթերի վավերացմամբ ստանձնել է նաեւ ուլորտային պատասխանատվություն՝ իրականացնելու որոշակի աշխատանքներ եւ վերահաստատել է դրանց շարունակականության ապահովման մտադրությունը, ինչպես նաեւ հավատարմությունը Եվրոպայի խորհրդի սկզբունքներին ու արժեքներին:

«Գտնվում ենք հանրակրթության բարեփոխումների ակտիվ փուլում: Մարդու իրավունքների շուրջ իրազեկվածության բարձրացումը, իրավական կրթությունը մեր առաջնահերթություններից են»,- ասել է Ժաննա Անդրեասյանը՝ նշելով, որ նախորդ տարեվերջին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության կրթության մինչեւ 2030 թվականը զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին» օրենքը, որտեղ շեշտադրված են ուլորտի կարելու խնդիրները: Նախարարը շեշտել է, որ նոր ծրագրի շրջանակում կրթության առաջընթաց է նախանշվում մի շարք ուղղություններով:

Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարի տեղակալ Բյորն Բերգեն շնորհակալություն է հայտնել ընդունելության համար եւ նշել, որ Եվրոպայի խորհրդի 2023-2026 թթ. գործողությունների ծրագիրը բազմաշերտ է եւ համագործակցության լայն հնարավորություններ է ընձեռում: Բյորն Բերգեն ընդգծել է Հայաստանն իր պատմությամբ եւ մշակույթով, հայ հասարակությունն իր արժեքներով եվրոպական ընտանիքի մասն են, իսկ Հայաստանի հետ համագործակցությունը եւ այն առաջընթացը, որն արդեն իսկ ձեռք է բերվել մի շարք ոլորտներում, Եվրոպայի խորհուրդը դրական է գնահատում:

Հանդիպման ընթացքում ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը եւս գործընկերներին է ներկայացրել նախարարության համակարգմամբ առանձին ոլորտներում իրականացվող ծրագրերն ու աշխատանքները՝ նշելով, որ այժմ քննարկվում են մշակույթի եւ սպորտի ոլորտների զարգացման ռազմավարությունները:



Մասնավորապես՝ սպորտի ոլորտում գլխավոր նպատակներ են սահմանվել ֆիզիկական ակտիվությունը եւ առողջ ապրելակերպը դարձնել ազգային կենսակերպ, Հայաստանը դարձնել բարձր մկանունների երկիր, բարձրացնել համակարգի կառավարումը եւ ինստիտուցիոնալ արդյունավետությունը: Այս համատեքստում ԿԳՄՍ նախարարը կարելու է նաեւ սպորտի զարգացմանն ուղղված փաստաթղթերում Եվրոպական արժեքների եւ առաջադեմ փորձի արտացոլումը՝ շեշտելով, որ ՀՀ կառավարությունը քայլեր է ձեռնարկում Հայաստանը համաշխարհային սպորտային քարտեզում ավելի նկատելի դարձնելու ուղղությամբ:

Ընդգծվել է մասնավորապես սպորտում ազնիվ խաղի դրսևորումների, տարբեր մարզաձևերում կանանց մերգրավվածության բարձրացման, ինչպես նաեւ դոպինգի դեմ պայքարի շրջանակում իրականացվելիք գործողությունների կարելու: Ժաննա Անդրեասյանը տեղեկացրել է, որ «Ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի մասին» օրենքում կատարված փոփոխություններով՝ արդեն իսկ հստակեցվել են «դոպինգ» հասկացությունը եւ հակադոպինգային գործունեությունը՝ մեր երկրում գործող օրենսդրությունը միջազգային եւ ներպետական իրավունքի նորմերին համապատասխանեցնելու նպատակով:

ԿԳՄՍ նախարարը, անդրադառնալով մշակույթային համագործակցության ընդլայնմանը, կարելու է եւս մշակույթի, ժառանգության եւ լանդշաֆտի հարցերով ղեկավար կոմիտեի հետ համատեղ աշխատանքը: Այս համատեքստում Ժաննա Անդրեասյանը Եվրոպայի գործընկերներին իր մտահոգությունն է հայտնել Ադրբեջանի վերահսկողության ներքո գտնվող տարածքներում հայկական մշակույթային ժառանգության պահպանության խնդրի առնչությամբ:

ԿԳՄՍ նախարարը Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարի ուշադրությունն է հրավիրել նաեւ Լեռնային Ղարաբաղում հաստատված հումանիտար ճգնաժամի խնդրին ու հույս հայտնել, որ միջազգային կառույցները հասցեական գործողություններ ու քայլեր կձեռնարկեն խնդրի կարգավորման ուղղությամբ:

Նախարարն ընդգծել է, որ հումանիտար ճգնաժամի արդյունքում խախտվել են շուրջ 120 հազար բնակչի, այդ թվում՝ 30 հազար երեխայի հիմնարար մի շարք իրավունքներ:

Կողմերը քննարկել են նաեւ երկուստեք հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր՝ վերահաստատելով, որ Եվրոպայի խորհրդի Հայաստանի համար իրականացվող գործողությունների նոր ծրագրով ընդլայնվում են համագործակցության ոլորտները:

Համաշխարհային բանկ

Ընդունել են հայաստանյան գրասենյակի տնօրենին

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը եւ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը ընդունել են Համաշխարհային բանկի Հարավային Կովկասի տարածաշրջանային տնօրեն Սեբաստիան Մոլենհուսին եւ հայաստանյան գրասենյակի տնօրեն Կառոլին Գեգինատին: Ողջունելով հյուրերին՝ Ժաննա Անդրեասյանը կարելու է Համաշխարհային բանկի հետ համագործակցությունը եւ Հայաստանի կրթության ոլորտի բարեփոխումների իրականացմանը ցուցաբերված աջակցությունը:

Ընդգծելով համատեղ բարեփոխումների շարունակականության անհրաժեշտությունը՝ Ժաննա Անդրեասյանը փաստել է, որ ՀՀ-ն միջազգային վստահելի գործընկեր է Հայաստանում փորձագիտական եւ աջակցության երկարաժամկետ ծրագրերի իրականացման առումով:

Հանդիպման ընթացքում ԿԳՄՍ նախարարն անդրադարձել է ՀՀ աջակցությամբ իրականացվող «ԵՄ-ն հանուն նորարարության (EU4Innovation)» եւ «Կրթության բարելավում» ծրագրերին:

Նա նշել է, որ ՀՀ կառավարությունը կարելու է կրթության դերը՝ այն դիտարկելով ռազմավարական առաջնահերթ ուղղություն՝ պետության մարտահ-



րավերներին դիմակայելու տեսանկյունից: Նշվել է, որ արդեն ընդունվել է «ՀՀ կրթության մինչեւ 2030 թվականը զարգացման պետական ծրագիրը», հաջորդաբար կընդունվի ծրագրի իրագործման միջոցառումների պլանը, որի համատեքստում եւս ակնկալվում է ՀՀ փորձագիտական աջակցությունը:

ՀՀ հայաստանյան գրասենյակի տնօրեն Կարոլին Գեգինատն իր հերթին նշել է, որ որակյալ ու մրցունակ կրթության ապահովումն իրենց հիմնական եւ կարելու առաջնահերթություններից է:

Նա պատրաստակամություն է հայտնել շարունակել կրթության զարգացման ծրագրերի աջակցությունը:

Կողմերը քննարկել են նաեւ բարձրագույն ուսումնական հաստատությունների կրթական ծրագրերի արդյունավետության բարձրացման, ինչպես նաեւ գիտության արդիականացման, բուհերի միջազգայնացման, կրթության ոլորտի օրենսդրության լավարկմանն առնչվող մի շարք հարցեր: Հստակեցվել են Համաշխարհային բանկի հետ համագործակցության առաջիկա գործողությունների շրջանակը:





## Նաեւ բրայան այբուբենով

### սկիզբը՝ էջ 1

Նիկողայոս Տիգրանյանի անվան տեսողության խանգարումներ ունեցող երեխաների թիվ 14 հատուկ դպրոցի երգչախմբի սաները ներկայացրել են գեղարվեստական միջոցառում: Երեխաները գիրք նվիրելու տոնի առիթով նաեւ գիրք են նվիրել նախարարին եւ ցրա տեղակալին:

Ժամանա Անդրեասյանը գրուցել է ուսուցիչների եւ երեխաների հետ, հետաքրքրվել, թե որոնք են առաջնային խնդիրները, որքանով են ապահովված անհրաժեշտ նյութերը: Անդրադառնալով ուսումնական նյութերի եւ դասագրքերի ապահովմանը՝ նախարարն ընդգծել է, որ առաջիկա սեպտեմբերից բրայան բոլոր դասագրքերն ու տետրերը կրթության առանձնահատուկ կարիք ունեցող երեխաներին կտրամադրվեն պետական բյուջեի միջոցներով: «Կարծում եմ՝ վաղուց պետք է դա արված լիներ: Այդ կարելու խնդիրը պետական մոտեցմամբ կարգավորվել է, եւ հույս ունեմ, որ այդ նախաձեռնությունը կնպաստի, որ առանձնահատուկ կարիք ունեցող երեխաների կրթությունն առավել արդյունավետ կազմակերպվի»,- ասել է նախարարը:

Նա առանձնակի կարելու է ուսուցիչների կատարած մեծ աշխատանքը եւ շնորհակալություն հայտնել նրանց՝ առանձնահատուկ խնդիր ունեցող երեխաների կրթության առաքելությունը ստանձնելու համար:

«Գիտեմ, որ ուսուցիչների աշխատանքը դժվար է, բայց միաժամանակ՝ շատ կարելու է պատասխանատու: Երեխաների մի մասը ոչ միայն սովորում, այլ նաեւ ապրում է այստեղ, եւ ուսուցիչն ու դպրոցը ինչ-որ առումով փոխարինում են նաեւ ընտանիքին՝ տալով սեր եւ ջերմություն, որը նրանց հիշողության մեջ մնալու է ողջ կյանքում»,- դիմելով ուսուցիչներին՝ ասել է նախարարը:

Լրագրողների հետ զրույցում ժամանա Անդրեասյանը նշել է, որ հանրակրթության



համակարգում հատուկ դպրոցների դերը վերահամաստվարման կարիք ունի: «Համարակրթության մասին» օրենքում կատարված համապատասխան փոփոխություններով հատուկ դպրոցները նախատեսվում է վերակազմակերպել ռեսուրս-կենտրոնների, ինչը կարելու է համընդհանուր ներառականության անցման համատեքստում: «Հատուկ դպրոցներում առկա կարողություններն ու ստեղծված նյութատեխնիկական հնարավորությունները պետք է օգտագործվեն նաեւ մյուս դպրոցներում առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունն ավելի որակյալ կազմակերպելու, ինչպես նաեւ ուսուցիչների վերապատրաստման մեթոդական աջակցության համար: Բոլորս հասկանում ենք, որ երեխայի համար ընտանիքից առանձին ապրելը լավագույն լուծումը չէ, հետեւաբար, կրթությունը բոլոր երեխաների համար՝ անկախ կարիքից, պետք է հասանելի եւ մոտ լինի բնակավայրին: Հատուկ դպրոց-

ների փորձն ու մեթոդական աջակցությունն այս իմաստով անգնահատելի է՝ համընդհանուր ներառական կրթության կազմակերպման առումով»,- նշել է նա՝ հավելելով, որ մանկավարժահոգեբանական աջակցության տարածքային կենտրոնները պետք է աջակցեն դպրոցներին եւ ուսուցիչներին ստանալու հատուկ կարիքով երեխաների հետ աշխատելու հմտություններ:

Անդրադառնալով Գիրք նվիրելու օրվա խորհրդին եւ դպրոցի ընտրությանը՝ ԿԳՄՍ նախարարը կարելու է համընդհանուր տոների եւ միջոցառումների կազմակերպման հարցում եւս ներառական լինելու անհրաժեշտությունը: «Մենք հասարակություններում ունենք խմբեր, որոնք կարիք ունեն լրացուցիչ հոգածության եւ ուշադրության: Կարծում եմ՝ մեր հասարակությունը պետք է նրբանկատ գտնվի եւ նման ընդհանուր տոների ու միջոցառումների ժամանակ չանտեսի առանձնահատուկ կարիք ունեցող խմբերին: Գիրք նվիրելու տոնի շրջանա-

կում ես ընտրել եմ այս դպրոցը, որպեսզի նաեւ հավելյալ ուշադրություն հրավիրեմ այսպիսի երեխաներին ընդհանուր միջոցառումներում ընդգրկելու հարցի վրա»,- ասել է նախարարը:

Ժամանա Անդրեասյանն ու Արաքսիա Սվաջյանը դպրոցի տնօրեն Ալեքսան Ահարոնյանի ուղեկցությամբ շրջել են դպրոցում՝ գրադարանում, մարզադահլիճում, դասարաններում ծանոթացել ուսուցման առանձնահատուկ պայմաններին, որոնք ապահովված են դպրոցում:

Ալեքսան Ահարոնյանը նշել է, որ մինչեւ հիմա իրենց ունեցած դասագրքերը ձեռք են բերվել բարերարների, ծանոթների, ընկերների աջակցությամբ եւ ուրախությամբ է ընդունել նախարարի հայտնած լուրը, թե այս տարի նախարարությունը հանձն է առել բոլոր դասագրքերը վերածել բրայային համակարգի եւ անվճար հատկացնել դպրոցին: «Ունենք նաեւ մասնագետների կարիք. դպրոցի 80 տոկոսը տարիքով մեծ ուսուցիչներ են, կա սերնդափոխության կարիք: Խնդրի մասին բարձրաձայնվել է նաեւ մանկավարժական համալսարանում: Օրինակ՝ մենք մի քանի անգամ հայոց լեզվի եւ գրականության ուսուցիչ թափուր տեղի համար մրցույթ են ենք հայտարարել, սակայն դիմողներ չեն եղել, որովհետեւ մենք մասնագետից բահանջում ենք բրայային լեզվի իմացության պահանջ»,- նշել է Ա. Ահարոնյանը:

Տեղեկացնենք, որ Նիկողայոս Տիգրանյանի անվան տեսողության խանգարումներ ունեցող երեխաների թիվ 14 հատուկ դպրոցում այս պահին 1-12-րդ դասարանների շուրջ 64 երեխա է սովորում: Նրանցից 20-ը գիշերում են դպրոցում, իսկ շաբաթ-կիրակի օրերին միայն 5-7-ը, որոնք մարզերից են եւ տուն չեն գնում: Դպրոցը ԳԳ-ում միակն է, որտեղ ընդունում են երեխաների Հայաստանից, Ջավախքից եւ Արցախից:

Կարինե ՄԱՆՈՒԿՅԱՆ

## Մայրենի

# Դպրոցական տոնական ծրագիր-միջոցառում

Երեւանի Բ. Ժամկոչյանի անվան թիվ 119 ավագ դպրոցի աշակերտները մեծ ոգեւորությամբ եւ պատասխանատվությամբ մասնակցեցին Մայրենի լեզվի օրվան նվիրված կրթական միջոցառման ինչպես կազմակերպչական եւ նախապատրաստական, այնպես էլ իրականացման աշխատանքներին: Հետաքրքրական այն էր, որ մասնակից աշակերտները ռուսական ուղղվածության հոսքային դասարաններից էին, շատերը՝ այլախոս: Սա փաստում է այն, որ դասավանդող ուսուցչները կարողացել է սեր արթնացնել առ հայերեն, իսկ այսօր աշակերտները, իսկապես, սիրում են իրենց իսկական մայրենի լեզուն՝ հայերենը: Այժմ նրանց կատարած աշխատանքների մասին



- Սովորողներն անդրադարձել էին Մայրենի լեզվի միջազգային օրվա պատմությանը: Հաշվի առնելով անցած դարի կեսերին մայրենի լեզվի իրավունքների դեմ մի շարք ընդվզումները՝ 1999 թ.-ին ՅՈՒՆԵՍԿՕ-ն փետրվարի 21-ը հռչակել է Մայրենի լեզվի միջազգային օր՝ ի նպաստ լեզուների իրավունքների ծանաչման եւ գործածության աջակցման: Մայրենի լեզվի միջազգային օրը հավերժացնում է այն քաղաքական պայքարը, որը մղվել է՝ բեմադրելու առանձին լեզու ճանաչելու համար: 1952 թ.-ին Դաքայում ուստիկանների կրակոցներից սպանվեցին մի խումբ երիտասարդներ, որոնք դուրս էին եկել բողոքելու կառավարության ուրդուն միակ պետական լեզու ճանաչելու որոշման դեմ: Ի հիշատակ այդ պայքարի՝ 1999 թ.-ից ի վեր ՅՈՒՆԵՍԿՕ-ն նշում է Մայրենի լեզվի միջազգային օրը: Ի հիշատակ բեմադրվածների պայքարի՝ Սիդ-

Նեյի էշֆիլդ գրոսայգում կանգնեցվել է «Պահպանիր մայր լեզուդ» հուշարձանը: - Աշակերտները պատրաստել էին ուսումնասիրություններ, զեկուցումներ «Հայոց լեզուն աշխարհի լեզուների շարքում» խորագրով: Մեռած եւ կենդանի լեզուների թիվը աշխարհում, ըստ տարբեր հաշվումների, 2500-3000 է: Այժմ գործածվում են 500-ից ավելի լեզուներ: Ըստ տարածվածության (խոսողների քանակի)՝ առաջին շարքերում են չինարենը (1.2 մլրդ), անգլերենը (1.1 մլրդ), իսպաներենը (0.5 մլրդ), ռուսերենը (260 մլն) եւն: Հայերենը առաջին հարյուր լեզուների շարքում է 9-10 մլն: Այս թվերը ժամանակի ընթացքում փոփոխվում են: Աշխարհի լեզուների պատկերը տարբեր է նաեւ ըստ այն հատկանիշի, թե դրանցից որը քանի երկրում է պետական կարգավիճակ ունի: Սիայնակ կամ տեղական լեզու-

ների հետ միաժամանակ պետական կարգավիճակ ունեն ֆրանսերենը (27 երկրում), արաբերենը (23), անգլերենը (20), իսպաներենը (19), ռուսերենը (7), չինարենը (3) եւն: Հայերենը պետական լեզու է 2 երկրում՝ ՀՀ-ում եւ ԼՂՀ-ում: Պետական կարգավիճակ ունեն 116 լեզուներ:

- Սովորողները հիմնավոր ներկայացրին հայոց լեզվի ձեւավորումը, հայոց լեզվի տարբերակները՝ բարբառներ, խոսակցական լեզու, գրական լեզու, գրական հայերենի զարգացման փուլերը՝ գրաբար, միջին հայերեն, աշխարհաբար, հայոց լեզվի գործառնությունները: Գրերի գյուտից հետո 405 թ. սկսվում է հայերենի պատմության գրային շրջանը: Այս շրջանը, իր հերթին, բաժանվում է երեք փուլի՝ հին հայերեն (գրաբար՝ 5-11 դդ.), միջին հայերեն (կիրիլյան հայերեն՝ 12-16 դդ.), նոր հայերեն (աշխարհա-

բար՝ 17-րդ դարից սկսած): Վերջինս ունի երկու տարբերակ՝ արեւելահայերեն եւ արեւմտահայերեն:

- Աշակերտները պատմեցին ավանդություններ, գրույցներ, արտասանեցին ասույթներ, թեւավոր խոսքեր, հայ դասական եւ ժամանակակից գրողների ստեղծագործությունները՝ նվիրված հայոց լեզվին:

- Սովորողները ներկայացրին լեզվական սխալներ, զուգածություններ, երկգրություններ, թույլատրելի եւ ոչ թույլատրելի, ընդունելի եւ երբ, տարբերակներ:

- Աշակերտները քննարկեցին մի շարք խնդիրներ, այդ թվում՝ լեզվաքաղաքական, լեզվի ուսուցման, լեզվապահպանական, լեզվի ուսումնասիրության, լեզվի կանոնարկման: Առաջ քաշվեցին հետաքրքիր դիտարկումներ, գաղափարներ, նոր ծրագրեր:

- Սովորողները կատարած աշխատանքները տարածեցին դպրոցով, ամփոփ որպես հաշվետվություն ներկայացրին դպրոցի տնօրենին:

Որպես ամփոփում մեր ժողովրդի համար մայրենի լեզուն ազգապահպան նշանակություն ունի, ինչպես կրոնը ու մշակույթը: Հայոց լեզուն հայոց հայրենիքն է: Հայ ինքնության պահպանման համար չափազանց կարելու է մայրենի իմացությունը, պահպանումն ու տարածումը: Մեր հասարակությանը պետք են կիրք եւ գրագետ մարդիկ, որոնք իրենց խոսքով կարող են լուսավորել ամեն ինչ եւ ամենուր:

Երեւանի Բ. Ժամկոչյանի անվան հ. 119 ավագ դպրոց



Կառավարության նիստում

Հաստատվել է պաշտոնների անվանացանկը

ՀՀ կառավարության նիստում գործադիր հավանության է արժանացրել հանրակրթական ուսումնական հաստատության եւ տարածքային մանկավարժաժողովական աջակցության կենտրոնի մանկավարժական եւ վարչատնտեսական աշխատողների պաշտոնների անվանացանկն ու դրանց նկարագիրը՝ համապատասխանեցնելով կրթության զարգացման միտումներին համահունչ մասնագետների պաշտոնի նկարագրին:

Որոշումը տարածվում է հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող բոլոր այն ուսումնական հաստատությունների վրա, որոնք անցում են կատարում «Հանրակրթության մասին» օրենքով սահմանված կառավարման նոր համակարգին:

Մասնավորապես՝ ոչ միայն մասնագիտական պատրաստվածությամբ, այլև գործառույթների հստակ սահմանմամբ է պայմանավորված, թե ինչպիսի կարողունակություններով պիտի օժտված լինի անձը՝ կրթության կազմակերպման արդյունքում կարողունակ քաղաքացիներ ձեռնարկելու համար: Գործող կարգով սահմանված են մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկը եւ նկարագիրը, որոնցում առկա մի շարք գործառույթներ առհասարակ չեն կիրառվում կամ իրագործելի են մասնակի դեպքերում՝ փոքրաթիվ դպրոցների աշխատակիցների կողմից: Հաստատության տնօրենի պաշտոնի նկարագիրը գործող կարգով ներառում է նաեւ վարչատնտեսական մասի գործառույթներ, ինչն առանձնացվել է օրենքի նոր փոփոխության արդյունքում, եւ բնականաբար, անհրաժեշտություն է առաջացել վերանայել ու հստակեցնել տնօրենի լիազորությունների շրջանակը:

«Հանրակրթության մասին» օրենքի փոփոխությամբ պայմանավորված՝ նոր կարգավորումներով հստակեցվել են տնօրենի ներկայացվող պահանջները՝ իր պարտականություններն առավել ամբողջական եւ համապարփակ իրականացնելու համար: Այն կարող է հանդիսանալ նաեւ իրեն ուղեցույց՝ դպրոցի զարգացման ծրագրի մշակելու համար, որի առանցքային ուղղվածությունը հաստատության բաց եւ թափանցիկ կառավարումն է, ինչպես նաեւ կրթության որակի շեշտադրումը: Կրթության արդյունավետ կազմակերպման համար կարեւոր է տնօրենի համագործակցային աշխատանքը վարչատնտեսական համակարգողի հետ՝ համատեղ նախատեսված գործընթացի կազմակերպման առումով:

Տնօրենի իրավասությունների շրջանակը, որը սահմանված է պաշտոնի նկարագրում, ներառում է կրթական ոլջ գործընթացը կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների ընտրության, մանկավարժական հաստիքների համալրման, կանոնադրական պարտավորությունների կատարման, ներքին կարգապահական կանոնների սահմանման գործառույթից՝ մինչեւ կրթության որակի պահպանում: Վերոգրյալ փոփոխությունների տրամաբանական շարունակությունն է տնօրենի տեղակալի գործառույթների նկարագրի վերանայումը:

Հանրակրթության ոլորտի փոփոխությունների կարեւորագույն բաղադրիչ են ուսուցչին ներկայացվող պահանջները՝ ներառելով հանրակրթության նոր չափորոշիչի պահանջներին համապատասխան կրթության վերջնարդյունքների ապահովման վերաբերյալ պատասխանատվության շրջանակ, սովորողների կարողունակությունների զարգացման համար անհրաժեշտ մասնագիտական եւ որակավորման չափանիշներ: Կարեւոր բաղադրիչ է Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ԱՌԴ-ի կազմումը եւ վարումը, դրանց հիման վրա կրթության կազմակերպումը:

Հարունակությունը՝ էջ 5

Քննարկում ոլորտի շահառուների հետ

սկիզբը՝ էջ 1

Քննարկմանը մասնակցել են ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալներ Արթուր Մարտիրոսյանն ու Արաքսիա Սվաջյանը, ԿԳՄՍ բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական վարչության պետ Լուսինե Գրիգորյանը, Հայաստանում ՅՈՒՆԵՍԿ-ի ներկայացուցչի տեղակալ Սիլվիա Մեստրոնին եւ «Միվիտտա» Հայաստան կառավարման խորհրդատվական ընկերության ներկայացուցիչ Սեւակ Հովհաննիսյանը, կրթության ոլորտի տեղական եւ միջազգային փորձագետներ, հասարակական կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության եւ կրթական մի շարք կառույցների ներկայացուցիչներ: Ավելի քան 7 տասնյակ մասնակիցներ նախապես հերթագրվել էին, ինչպես նաեւ ապահովված էր քննարկմանը առջանց հետեւելու հնարավորություն:

ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը, կարեւորելով նախագծի շուրջ հանրային քննարկումների անցկացումը, ներկայացրել է գործողություններ ծրագրի վերջնական նպատակը եւ ռազմավարական հիմնական ուղղությունները:

«Հավատարիմ ժողովրդավարության լավագույն սկզբունքներին՝ ցանկանում ենք հանրային տարբեր ձեռնարկներով քննարկումներ ունենալ, լսել հանրությանը, կրթության շահակիցներին եւ այդ ամենի հիման վրա ունենալ լավագույն նախագիծը: Նաեւ հանրային մասնակցայնության շնորհիվ ակնկալում ենք ունենալ իսկապես որակյալ կատարողներ, որն ուղենշային կլինի մեզ համար մինչեւ 2030 թվականը»,- ասել է Արթուր Մարտիրոսյանը եւ ընդգծել՝ ծրագրի համար հիմք են ծառայել ոչ միայն ՀՀ կառավարության 2021-2026 թթ. ծրագիրը, այլև միջազգային տարբեր մասնագիտացված կառույցների երկարամյակ նախագծերում փաստաթղթերը:

Արթուր Մարտիրոսյանը ներկայացրել է ծրագրի վերջնական նպատակը, այն է՝ ազգային եւ համամարդկային արժեքների վրա հիմնված, ՀՀ զարգացմանը միտված արդյունավետ եւ միջազգային մրցունակ կրթական համակարգի ձեռնարկում: Նախարարի տեղակալն անդրադարձել է նաեւ ծրագրի ռազմավարական ուղղություններին՝ համընդհանուր ներառական սովորողակենտրոն եւ մասնակցային կրթական միջավայրի ստեղծում, կրթության արդյունավետության բարձրացում, կրթական ծառայությունների եւ արտադրանքի միջազգայնացում ու արտահանում: Որպես ծրագրի առանձնահատկություններ՝ Արթուր Մարտիրոսյանը մատնանշել է հստակ արդյունքային շրջանակը, գործունե մեխանիզմներ՝ առաջընթացի միջանկյալ եւ վերջնական արդյունքները գնահատելու եւ վերահսկելու համար, միջոցառումների ֆինանսական գնահատական անկախ փորձագետների կողմից, ինչպես նաեւ ֆինանսավորման աղբյուրների բազմազանացում: Փոխնախարարը տեղեկացրել է, որ 2026 թվականի համար նախանշվել են միջանկյալ արդյունքներ, որի գնահատման հիման վրա արդեն առավել մանրամասն կլինի մինչեւ 2030 թվականի ծրագիրը:

Նախարարի տեղակալն անդրադարձել է նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը: Անդրադարձնալով, մասնավորապես, նախանշված է միջին մասնագիտական կրթության ոլորտին՝ Արաքսիա Սվաջյանը նշել է, որ որպես նպատակներ՝ սահմանվել են բովանդակության եւ մասնագիտական ներուժի արդիականացումն ու հզորացումը՝ աշխատաշուկայի եւ ժամանակից



մասնագիտական պահանջներին համահունչ, ներառական, անվտանգ միջավայրի զարգացումն ու հասանելիության ապահովումը բնակչության բոլոր խմբերի համար:

Այս համատեքստում Արաքսիա Սվաջյանը կարեւորել է ՄԿՈՒ հաստատությունների քարտեզագրման, մասնավոր հատվածի հետ համագործակցության, աշխատանքի վրա հիմնված ուսուցման, ինստիտուցիոնալ եւ ծրագրային հավատարմագրման, ենթակառուցվածքների, նյութատեխնիկական բազայի ապահովման գործընթացները: Նա կարեւորել է նաեւ սովորողների եւ մանկավարժական աշխատողների տրամապորտային ծախսերի փոխհատուցման, ֆինանսավորման, այդ թվում՝ պետական, տարբերակված քաղաքականության գործարկման մեխանիզմների ներդրումը հանրապետական մշակակրթության հաստատություններում:

«Այս տարի ՄԿՈՒ ոլորտում դասավանդողները եւս հնարավորություն կունենան մասնակցելու կամավորատեստավորմանը, տարակարգի շնորհման կարգերին եւ իրենց կարողությունները զարգացնող մի շարք այլ գործընթացներին»,- ասել է ԿԳՄՍ նախարարի տեղակալը:

Բարձրագույն կրթության ոլորտում նախատեսվող գործողությունների ծրագիրն էլ ներկայացրել է ԿԳՄՍ բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության վարչության պետ Լուսինե Գրիգորյանը: Նրա խոսքով՝ գործողություններին պլանն ուղղված է բարձրագույն ուսումնական հաստատությունների ներքին որակի ապահովմանն ու բարձրացմանը:

«Գործողություններից մեկը վերաբերում է պետական պատվերի ձեռնարկման միջաժամկետ եւ երկարաժամկետ պլանավորման ինստիտուցիոնալ մեխանիզմների սահմանմանը: Այսինքն՝ նախատեսվում են մասնագիտություններ, որոնց պարագայում սովորողներն օգտվելու են պետության կողմից ուսման վարձի լրիվ փոխհատուցումից: Հաջորդ եւ կարեւոր նպատակը բուհերում կրթության առանձնահատուկ կարիք ունեցող ուսանողների համար անհրաժեշտ հարմարեցումներով միջավայրի ստեղծումն է: Այն իրենից ենթադրում է ենթակառուցվածքների եւ այլ խելամիտ հարմարեցումներով միջավայրի ստեղծում՝ թեքահարթակներից սկսած մինչեւ, օրինակ, տեսողության խնդիր ունեցող անձանց համար դասազրբերի եւ այլ հարմարությունների ապահովում»,- ասել է Լուսինե Գրիգորյանը:

Հանրային քննարկման մասնակիցներն իրենց հետաքրքրող հարցերն են ուղղել ԿԳՄՍ նախարարի տեղակալներին՝ հարցադրումներ անելով, մասնավորապես, հանրակրթական դպրոցների շենքային պայմանների, վերապատրաստումների, որակի վերահսկողության եւ այլնի վերաբերյալ: Նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանի խոսքով՝ բարձրացված հարցերը ներկայացված են «ՀՀ կրթության մինչեւ 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը» հաստատելու մասին» օրենքից բխող գործողությունների ծրագրում, սահմանվել են թիրախներն ու դրանք իրագործելու ճանապարհները:

«Հասկանում ենք՝ մեկ օրում բոլոր խնդիրները չեն լուծվի. մենք հիմա բարեփոխումների փուլում ենք: Ներդրել ենք նոր չափորոշիչ, որը, վստահ ենք, ավելի որակյալ կրթություն ունենալու հնարավորություն կտա: Ներդրում ենք ուսուցիչների խրախուսման մեխանիզմներ եւ գործողությունների պլանով ցույց ենք տալիս բոլոր այն մեխանիզմները, որոնք հետագա տարիներին ենք ներդնելու, որպեսզի ուսուցիչ աշխատանքը դառնա ավելի հետաքրքրական թե՛ ոլորտի աշխատակիցների, թե՛ դիմորդների համար, իսկ մանկավարժական կրթությունը եւ գործունեությունը դառնան ավելի գրավիչ»,- ասել է Արաքսիա Սվաջյանը:

Նախարարի տեղակալն ուշադրություն է հրավիրել այն հանգամանքին, որ յուրաքանչյուր գործողություն գնահատվել է ինչպես անկախ փորձագետների, այնպես էլ ԿԳՄՍ ֆինանսական վարչության կողմից: ԿԳՄՍ նախարարի տեղակալը շեշտել է՝ պատրաստ են լսել կառուցողական առաջարկներ եւ քննարկել գործողությունների ծրագրում համապատասխան փոփոխություններ իրականացնելու հնարավորությունը:

ՅՈՒՆԵՍԿ-ի ներկայացուցչի տեղակալ Սիլվիա Մեստրոնին եւս կարեւորել է նմանօրինակ քննարկումները եւ վերահաստատել աջակցությունը շարունակելու պատրաստակամությունը: Սիլվիա Մեստրոնին առանձնացրել է մի քանի ուղղություններ, որոնք ՅՈՒՆԵՍԿ-ը կարելու է: Դրանք, մասնավորապես, վերաբերում են բոլոր դպրոցները ներառական եւ երեխայակենտրոն դարձնելուն, ճգնաժամային պայմաններում երեխաների կրթության իրավունքի ապահովմանը եւ այլն:

Հանդիպման ընթացքում «Միվիտտա» ընկերության ներկայացուցիչ Սեւակ Հովհաննիսյանը համառոտ ներկայացրել է Կրթության համաշխարհային գործընկերության հիմնադրամի տրամադրած կրթության ոլորտի զարգացման ծրագրի դրամաշնորհի շրջանակում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության եւ ՅՈՒՆԵՍԿ-ի համատեղ նախաձեռնությամբ «ՄԻՎԻՏՏԱ ԱՍ» կազմակերպության կողմից իրականացված Հայաստանի կրթության ոլորտի վերլուծությունը: Արդյունքները վերաբերել են ՀՀ-ում նախադպրոցական տարիքի եւ դպրոցահասակ երեխաների թվաքանակի, սպասվելիք փոփոխությունների, դպրոցների սեյսմիկ անվտանգության, ինչպես նաեւ Հայաստանում կրթական ծախսերի, երեւումն է մարզերում դպրոցների ծանրաբեռնվածության եւ պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների, կրթության արդյունավետության եւ աղքատության ցուցանիշի կապի եւ մի շարք այլ խնդիրների:

«ՀՀ կրթության մինչեւ 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը» հաստատելու մասին» օրենքից բխող գործողությունների ծրագիրը տեղադրվել է e-draft էլեկտրոնային հարթակում. հետաքրքրված անձինք մինչեւ փետրվարի 23-ը կարող են ներկայացնել ծրագրի վերաբերյալ իրենց առաջարկությունները, դիտողություններն ու նկատառումները:



Աշխարհի հետ

Հայ-ճապոնական բարեկամության հեռանկարները

ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը ընդունել է Հայաստանում ճապոնիայի արտակարգ և լիազոր դեսպան Ֆուկուշիմա Մասանորիին: Հանդիպմանը ներկա է եղել նաև ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը:

Ժաննա Անդրեասյանը ողջունել է դեսպան Ֆուկուշիմա Մասանորիին և կարելու էլ հայ-ճապոնական բարեկամական կապերի զարգացումը՝ համոզմունք հայտնելով, որ դեսպանն իր ներդրումը կունենա Հայաստանի և ճապոնիայի միջև հարաբերությունների առավել ամրապնդման և խորացման գործում:

«Շատ լավ նախադրյալներ են ստեղծված մեր երկու երկրների միջև կրթության, գիտության, մշակույթի, սպորտի և երիտասարդության ոլորտներում համագործակցությունն ամրապնդելու և համատեղ նոր ծրագրեր իրականացնելու համար: Գրասենյակային կառավարությունը ՀՀ մարզերում մի շարք պետական կազմակերպությունների հետ դրամաշնորհային աջակցության տարբեր ծրագրեր է իրականացնում, ինչը շատ գնահատելի է», - ասել է Ժաննա Անդրեասյանը՝ կարելու էլ ճապոնիայի ներդրումային մասնակցությունը Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման գործում:

ԿԳՄՍ նախարարը կարելու էլ, մասնավորապես, «Grant Assistance for Grassroots Human Security Projects» դրամաշնորհային նախագիծը, որի շրջանակում ճապոնիայի կառավարությունը Հայաստանի Հանրապետությունում իրականացրել է 80-ից ավելի նախագծեր: «Grassroots» ծրագրերի (GGP) շրջանակում վերջին տարիների ընթացքում ՀՀ ԿԳՄՍ նախարարությունում ստորագրվել են դրամաշնորհային 6 պայմանագրեր:

Դեսպան Ֆուկուշիմա Մասանորին շնորհակալություն է հայտնել ընդունելության համար ընդգծելով, որ Հայաստանն իրենց համար կարևոր գործընկեր է: Նա նաև նշել է, որ երկու երկրների միջև կրթության, գիտության, մշակույթի, սպորտի և երիտասարդության ոլորտներում կառավարության համագործակցության շատ ավելի մեծ ներուժ:



Ժաննա Անդրեասյանը պատրաստակա՞նություն է հայտնել ի դեմս Գիտության կոմիտեի փոխգործակցել ճապոնիայի կրթության, մշակույթի, սպորտի, գիտության և տեխնոլոգիաների նախարարության, ինչպես նաև Գիտության զարգացման ճապոնական միության հետ՝ համագործակցային ծրագրեր իրականացնելու նպատակով:

Կողմերը կարելու էլ նաև մշակութային համագործակցության հեռանկարները, մասնավորապես համատեղ ցուցադրություններ, համերգներ իրականացնելու հնարավորությունը: Հայաստանում ճապոնիայի արտակարգ և լիազոր դեսպան Ֆուկուշիմա Մասանորին հայտնել է, որ երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակի առթիվ առաջիկայում մի շարք մշակութային միջոցառումներ են նախատեսված:

Ժաննա Անդրեասյանը դեսպանի ուշադրությունն է հրավիրել նաև Լեռնային Ղարաբաղում հաստատված հունանիտար ճգնաժամի խնդրին և հույս հայտնել, որ միջազգային կառույցները հասցեական գործողություններ ու թայլեր կծեռնարկեն խնդրի կարգավորման

համար: Նախարարն ընդգծել է, որ հունանիտար ճգնաժամի արդյունքում խախտվել են շուրջ 120 հազար բնակչի, այդ թվում՝ 30 հազար երեխայի հիմնարար մի շարք իրավունքներ: «Նրանք արդեն 60 օրից ավելի է գտնվում են շրջափակման մեջ, զրկված են հիմնարար մի շարք իրավունքներից: Սննդի մատակարարման անհնարինության, Արրբեջանի կողմից զազամատակարարման և էլեկտրաէներգիայի պարբերական խափանումների պատճառով թե՛ մանկապարտեզներում, թե՛ դպրոցներում և թե՛ կրթական մյուս հաստատություններում գրեթե չեն իրականացվում ուսումնական գործընթացները, որն անթույլատրելի իրավիճակ է: Կարծում են՝ միջազգային հասցեական արձագանքը կնպաստի իրավիճակի կարգավորմանը»:

Դեսպան Ֆուկուշիմա Մասանորին ճապոնիայի կառավարության անունից իր մտահոգությունն է հայտնել ստեղծված իրավիճակի վերաբերյալ, նշել, որ իրենք ուշադրությամբ հետևում են զարգացումներին և կարելու էլ են Լաչինի միջանցքի ամբողջ երկայնքով տեղաշարժի ազատության ու անվտանգության ապահովումը:

Հաստատվել է պաշտոնների անվանացանկը

սկիզբը՝ էջ 4

Հանրակրթության ոլորտը կարգավորող իրավական դաշտի փոփոխությամբ պայմանավորված՝ մանկավարժական աշխատողներին ներկայացվող ընդհանրական պահանջ է իրազեկվածությունը օրենսդրական ոլորտի փոփոխություններին: Ուսուցչին ներկայացվող պահանջ է նաև ժամաօրվումը դասավանդման ժամանակակից մեթոդներին և նորագույն կրթական տեխնոլոգիաներին: Ուսուցիչները մասնագիտական գործունեություն իրականացնելիս կկատարեն վերլուծություններ, կկիրառեն նորարարություններ, կիրականացնեն ուսումնական նախագծեր, կյուրացնեն դասավանդման նոր մեթոդների առանձնահատկությունները և կուսումնասիրեն գործընկերների առաջավոր փորձը:

Մանկավարժական աշխատողների կարողունակություններում էական նշանակություն է տրվել Դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգում աշխատանքների իրականացմանը, համակցված/հեռավար ուսուցման կազմակերպման գործընթացի կարգավորումներին՝ ըստ պատասխանատվության աստիճանի: Էլեկտրոնային կառավարման և դասավանդման ապահովման մասնագետի պաշտոնի նկարագիրը սահմանվում է առաջին անգամ, որով ներկայացվում է աշխատողի կարելու էլ դերակատարումը՝ ուսման գործընթացի պատշաճ կազմակերպման առումով:

Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հայ-թուրքմենական համագործակցության նոր ուղիներ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը ընդունել է ՀՀ-ում թուրքմենստանի արտակարգ և լիազոր դեսպան Մուհամետգելդի Այազովի գլխավորած պատվիրակությանը: Հանդիպմանը ներկա է եղել նաև նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը:

Ժաննա Անդրեասյանը, կարելու էլ Հայաստանի և Թուրքմենստանի միջև ձեռնարկված բարեկամական կապերը, նշել է, որ երկու երկրների հարաբերություններում կրթության, գիտության, մշակույթի, սպորտի և երիտասարդության ոլորտներում համագործակցությունն առանձնահատուկ տեղ է գրավում: Նախարարի խոսքով՝ համատեղ նախագծերի իրականացումը և փորձի փոխանակման հնարավորությունը նպաստում են երկկողմ հարաբերությունների ամրապնդմանը:

ԿԳՄՍ նախարարը միջբուհական համագործակցության զարգացման համատեքստում առանձնացրել է դրա կայուն զարգացման ապահովման հնարավորությունը՝ համատեղ կրթական և հետազոտական, ինչպես նաև ուսանողների ու դասախոսների փոխանակման ծրագրերի իրականացման միջոցով՝ ընդգծելով, որ ՀՀ բուհերում ներկայումս սովորում է Թուրքմենստանի 30 քաղաքացի:

Ժաննա Անդրեասյանը գիտության ոլորտում համագործակցությունը զարգացնելու և ամրապնդելու պատրաստակա՞նություն է հայտնել Թուրքմենստանի գործընկեր կառույցների հետ համատեղ գիտահետազո-

տական ծրագրեր կյանքի կոչելու միջոցով: Նախարարը կարելու էլ համագործակցության շարունակությունը ՀՀ ԳԱԱ Ա. Նազարովի անվան երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտի և Թուրքմենստանի գիտությունների ակադեմիայի սեյսմաբանության և ֆիզիկայի ինստիտուտի միջև: Այդպիսի համագործակցությունը, ըստ նախարարի, հեռանկարային է գիտության ոլորտում նոր ծրագրեր և նախաձեռնություններ իրականացնելու համար:

Կողմերը դիտարկել են նաև մշակույթի և ստեղծագործական ոլորտում համագործակցությունը՝ երկու երկրներում անցկացվող միջազգային միջոցառումներին թատերական արվեստի վարպետների, անհատ կատարողների, ստեղծագործական խմբերի և մշակութային կազմակերպությունների մասնակցությամբ: Ժաննա Անդրեասյանի խոսքով՝ 2023 թվականին նշվում է հայ մեծանուն կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի 120-ամյակը, և ցանկալի կլինի թուրքմեն մշակույթի գործիչների մասնակցությունը հորեյանական միջոցառումներին:

Նախարարը նաև տեղեկացրել է, որ ներպետական համաձայնեցման ընթացակարգ է անցել «ՀՀ կառավարության և Թուրքմենստանի կառավարության միջև մշակույթի ու արվեստի բնագավառում 2022-2024 թվականների համագործակցության» ծրագրի նախագիծը, որը 2022 թ. հունիսին փոխանցվել է թուրքմենական կողմին՝ փոխհամաձայնեցման: Կողմերը համաձայնվել են ծրագրի նախագծի ժամկետներ



ը փոխել՝ սահմանելով 2023-2024 թթ.:

Երիտասարդության և սպորտի ոլորտներում համագործակցության համատեքստում Ժաննա Անդրեասյանն առաջարկել է Ծաղկածրի գլխավոր մարզահամալիրում և Երեւանի Օլիմպիականում անցկացնել համատեղ ուսումնամարզական հավաքներ՝ ազատ ոճի ըմբշամարտ, ծանրամարտ, հունահռոմեական ըմբշամարտ, ծյուղո և բռնցքամարտ մարզաձևերից: Նշվել է, որ այսօրինակ ծրագրերը կնպաստեն երիտասարդ սերունդների միջև շփումների համար անհրաժեշտ նոր հարթակների և հնարավորությունների ստեղծմանը:

ՀՀ-ում Թուրքմենստանի արտակարգ և լիազոր դեսպան Մուհամետգելդի Այազովն իր հերթին շնորհակալություն է հայտնել թուրքմենական կողմի նախաձեռնություններին աջակցելու համար՝ նշելով, որ մեծ

ուշադրություն են դարձնում ԿԳՄՍ նախարարության հետ համագործակցությանը:

Դեսպանն անդրադարձել է Հայաստանի և Թուրքմենստանի համատեղ միջոցառումներին. մասնավորապես՝ նշվել է, որ 2019 թ. նոյեմբերի 5-7-ը Թուրքմենստանում կայացել են Հայաստանի մշակույթի օրեր, որի շրջանակում տեղի են ունեցել մի շարք ցուցադրություններ, փորձի փոխանակման և վարպետության դասեր: 2020 թ. մայիսի 4-6-ը նախատեսվում էր իրականացնել «Թուրքմենստանի մշակույթի օրերը Հայաստանում» ծրագիրը, սակայն կորոնավիրուսի համաճարակով պայմանավորված ծրագիրը հետաձգվել է, և այն Հայաստանում կանցկացվի այս տարի:

Մուհամետգելդի Այազովը խոսել է նաև Երեւանի Կոմիտասի անվան պետական և Թուրքմենստանի ազգային կոնսերվատորիաների, Հայաստանի ազգային ազարային և Թուրքմենստանի Ս. Ա. Նիյազովի անվան գյուղատնտեսական համալսարանների, ՀՀ ԳԱԱ Ա. Նազարովի անվան երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության և Թուրքմենստանի գիտությունների ակադեմիայի սեյսմաբանության և ֆիզիկայի ինստիտուտների, Մեարոպ Մաշտոցի անվան Մատենադարանի, ինչպես նաև Երեւանի պետական և Թուրքմենստանի Մախթումկուլիի անվան պետական համալսարանների միջև համագործակցության ընդլայնման հարցերի մասին:

Հանդիպման ընթացքում քննարկվել են նաև երկկողմ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:



Աշխարհի հետ

Առկա է հարաբերությունների զարգացման մեծ ներուժ

Նախարար Ժաննա Անդրեասյանն ընդունել է 33-ում էստոնիայի 3անրապետության արտակարգ և լիազոր դեսպան Ռինա Կալյուրանդին ու էստոնիայի միջազգային զարգացման կենտրոնի ներկայացուցիչներին: 3անդիպմանը ներկա է եղել ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը:

Ժաննա Անդրեասյանը, ողջունելով դեսպանին, կարեւորել է երկու բարեկամական երկրների համագործակցությունը և վստահություն հայտնել, որ կրթության, գիտության, մշակույթի, սպորտի և երիտասարդության բնագավառներում համատեղ ծրագրերի իրականացումը կնպաստի երկու կողմ հարաբերությունների զարգացմանը և խորացմանը: ԿԳՄՍ նախարարի խոսքով երկու երկրների միջև առկա է հարաբերությունների զարգացման մեծ ներուժ, և անհրաժեշտ է ստեղծել համագործակցության իրական դաշտ՝ անցնելով հստակ գործողությունների:

Նախարարը կարեւորել է երկու երկրների միջև միջբուհական երկխոսության զարգացումը, որը կներառի համատեղ կրթական և գիտահետազոտական, ինչպես նաև ուսանողների և դասախոսների փոխանակման ծրագրեր իրականացնելու հնարավորությունը:

Կողմերը քննարկել են համագործակցությունը բազմակողմ ձևաչափերով, մասնավորապես՝ բուհերի խրախուսումը «Erasmus+» ծրագրերի շրջանակում հա-

մատեղ հայտերը ներկայացնելու համար: Ընդգծվել է, որ այսօրինակ փոխգործակցությունը կնպաստի երկու պետությունների բուհերի միջազգայնացման գործընթացի կատարելագործմանը և բարձրագույն կրթության ոլորտում կայուն զարգացման ապահովմանը:

33-ում էստոնիայի 3անրապետության արտակարգ և լիազոր դեսպան Ռինա Կալյուրանդին իր հերթին նշել է, որ հատկապես կրթության ոլորտում համագործակցությունը կարեւոր ուղղություններից է:

Դեսպանը տեղեկացրել է, որ էստոնիայի կառավարությունը մեծ ուշադրություն է դարձնում ինչպես բարձրագույն և հետբուհական կրթության, այնպես էլ հանրակրթության ոլորտներին, նաև նշել էստոնիայի 3անրապետությունում հանրակրթության ոլորտում կիրառվում է միջառարկայական մոդելը, որը թույլ է տալիս երեխաներին ընտրել իրենց մասնագիտությունը դեռևս հանրակրթության մակարդակում:

Ռինա Կալյուրանդը տեղեկացրել է, որ էստոնական մոդելը Եվրոպայում լավագույններից է, և տեղայնացման նպատակով փորձարկվում է նաև այլ երկրների դպրոցներում:

«33 կառավարությունը կարեւորում է կրթական բարեփոխումները, ներկայում փորձարկվում են 3անրակրթության նոր չափորոշիչները, և այդ նպատակով 33 բոլոր դպրոցներում ստեղծվում են լաբորատոր ենթակառուցվածքներ, որը կարող է լավ



մախարայալ լինել՝ բնագիտական ուղղությամբ կրթության որակի և արդյունավետության բարելավման համար: Մեզ համար կարեւոր է քննարկել և հասկանալ այլ երկրների լավագույն փորձը, որը կարող է օգտակար լինել պետական չափորոշիչով նախանշված վերջնարդյունքը ձևավորելու տեսանկյունից»,- ասել է ԿԳՄՍ նախարարը: Ժաննա Անդրեասյանը նաև պատրաստակամություն է հայտնել ներկայացնել հայաստանյան փորձը՝ նշելով, որ 3այաստանում որակյալ կրթական ծառայություններ է մատուցվում նաև ոչ ֆորմալ կրթությամբ առանձնացնելով «Թունո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի և «Ար-

մաթ» ինժեներական լաբորատորիաների գործունեությունը:

Նախարարը նշել է, որ գիտության ոլորտում նույնպես համագործակցությունը խորանում է՝ մասնավորապես փաստելով՝ ԿԳՄՍ գիտության կոմիտեն ձեռնարկել է քայլերը և կապեր է հաստատել էստոնիայի հետազոտությունների խորհրդի հետ՝ գիտության ոլորտի բարեփոխումների, գիտական կազմակերպությունների ֆինանսավորման մեխանիզմների արդյունավետության բարձրացման, գիտական նախագծերի փորձաքննության և մի շարք այլ ոլորտներում փորձի փոխանակման ծրագրեր իրականացնելու առաջարկությամբ:

Անդրադառնալով մշակույթի ոլորտին՝ Ժաննա Անդրեասյանը նշել է, որ երկու երկրների միջև արդյունավետ համագործակցության հիմքում ընկած են նաև մշակութային կապերի զարգացմանը միտված քայլերը. «Մենք ուրախ կլինենք, որ էստոնիայում կազմակերպվող միջազգային մշակութային միջոցառումներին մասնակցեն նաև 3այաստանի 3անրապետության մշակութային գործիչները և խմբերը: Մեր նախարարությունն իր հերթին պատրաստական է 3այաստանում կազմակերպվող մշակութային միջոցառումներին հյուրընկալել էստոնիայի մշակութային գործիչներին»:

Երկուստեք քննարկել են փոխհամագործակցության ծրագրերի իրականացման հնարավորությունը նաև սպորտի և երիտասարդության բնագավառներում:

Իրական ու անհերքելի

սկիզբը՝ էջ 1

44-օրյա պատերազմից բզկտված և այսօր շրջափակված Արցախում անհնար է առանց այդ հույսի ապրել: Եվ շարժման 35-ամյակը նշանավորող տարաբնույթ միջոցառումները հենց մեր անմեռ հույսի արտահայտությունն են, քանզի պայքարի ողջ պատմությունը հեղինակել են իրական հերոսներ: 88-ի փետրվարի 20-ի պատմական որոշման ամեն մի դրույթ բյուր անգամ անցնող տարիներին ապացուցել է իր անհերքելիությունն ու իրավազիտությունը՝ անցնելով պատերազմներով, զրկանքներով լի ճանապարհ:

Այս ամենի մասին խոսվեց Ստեփանակերտի մշակույթի և երիտասարդության պալատում կազմակերպված հանդիսավոր միջոցառմանը: Լեփ-լեցուն դահլիճում էին Ա3 նախագահ Արայիկ 3արությունյանը, երկրորդ և երրորդ նախագահներ Արկադի Ղուկասյանն ու Բակո Սահակյանը, պետ-նախարար Ռուբեն Վարդանյանը, պաշտոնատար այլ անձինք:

Ներկաները լռության րոպեով հարգանքի տուրք են մատուցել արցախյան բոլոր պատերազմներում հանուն հայրենիքի ազատության անմահացած հերոսների հիշատակին:

3այաստանյայց Առաքելական Սուրբ



Եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Տեր Վրթանես Եպիսկոպոս Աբրահամյանը, դիմելով ներկաներին, ասել է. «Աստվածաշնչում ասված է, որ արդարությունը բարձրացնում է ազգին, բայց մեղքը ժողովուրդներ է կործանում: Այս խոսքերը գալիս են փարատելու մեր բոլոր հակասական մտածումները, երբ հիշում ենք 35 տարի առաջ մեր ժողովրդի ազգային վերազարթնքը և միաժամանակ հայացք

վորդներ է կործանում: Այս խոսքերը գալիս են փարատելու մեր բոլոր հակասական մտածումները, երբ հիշում ենք 35 տարի առաջ մեր ժողովրդի ազգային վերազարթնքը և միաժամանակ հայացք

ծգում մեր ներկա կյանքին»:

Ա3 ԱՅ նախագահ Արթուր Թովմասյանը, անդրադառնալով շարժման պատմությանը, նշել է. «Արցախի համար շարժումը, հիրավի, ունեցավ դարակազմիկ նշանակություն՝ իր ապագայի տեսլականը կանխորոշելու, տասնամյակների հպատակությունից ազատ ու անկախ ապրելակերպի հայտ ներկայացնելու տեսանկյունից: Ղարաբաղյան շարժման հերթական տարեդարձը նշում ենք համեստ ձևաչափով: Բայց հավատացած եղեք, որ մեր պատմական առանցքային նշանակության բոլոր տարեթվերը ապագայում կնշենք հավուր պատշաճի: Աստված պահպան հայկական երկու հանրապետություններին: Շնորհակալություն և խոնարհում 88-ի շարժմանը զինվորագրվածներին՝ իրենց հայրենամուկ գործի համար»:

Միջոցառմանը արցախյան շարժման ակտիվիստներ Սլավա Առուշանյանը, 3ամլեստ Գրիգորյանը, Կամո Սաֆարյանն իրենց ելույթներում նշել են, որ արցախցին ապրելու է իր հայրենիքում, ինչպես ապրել է դարերով և շարժման դասերն այսօր նախանշում են ամուր և հաստատուն քայլերի անհրաժեշտությունը:

Երեկոն ուղեկցվում էր երաժշտական կատարումներով:

Գիրք նվիրելու օրը Արցախում

Ամենայն հայոց բանաստեղծի ծննդյան օրն ու այդ շառավղով ձևավորված գիրք նվիրելու ավանդույթն աննկատ չեն մնացել Արցախում ապրող շատ երիտասարդների համար:

Չնայած Արցախում տիրող ներկա դժվարին իրավիճակին՝ փետրվարի 19-ին Ստեփանակերտի «Պոլ Էյուարի տուն-ֆրանկոֆոնիայի կենտրոն»-ում «Թունո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնը կազմակերպել էր հետաքրքիր և մարդաշատ միջոցառում: Բարեկենդանի տոնի

զույները ևս խառնվել էին միջոցառմանը՝ հենց մասնակիցների ցանկությամբ: Թունանյանական տողերին համահունչ էին ժողովրդական այս տոնը խորհրդանշող հերոսների պատկերները՝ մասնակիցների պատրաստած տիկնիկներն ու դիմակները:

Ստեփանակերտի «Թունո» կենտրոնի ղեկավար Խաչատուր 3այրապետյանը մեզ հետ զրույցում կարեւորեց 3ովհաննես Թունանյանի ստեղծագործության մշտափնայն ներկայությունը բոլորիս կյանքում:

Իր ապրեցնող դասերով թունանյանա-

կան գրականությունը մեզ համար նաև ազգային ավանդույթների պահպանման լավագույն կոթողն է: Եվ պատահական չէ, որ հենց դժվարին իրավիճակներում են նրա ստեղծագործություններն առավել վառ գույներով ներկայանում ամենափոքր գործերում իսկ անթեղված հայրենապաշտության, սեփական արմատներին ապավինելու պատգամով:

«Ստեղծված իրավիճակում նման միջոցառումները հանրությանը դժվարություններից լիքաթափվելու հնարավորություն են

տալիս»,- նշել է Խ.3այրապետյանը:

Թունանյանական ընթերցումներին զուգահեռ՝ միջոցառման մասնակիցները նվիրել և փոխադարձաբար գրքեր են ստացել, գունազարդման համար տրամադրված պատկերների միջոցով արտահայտել իրենց երեսակայության խաղն ու ստեղծագործական շնորհքը:

Նվարդ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ք. Ստեփանակերտ, մեր սեփական թրթակից



Հորդորակներ Լեզվի կոմիտեի

Օտարաբանությունների «հաստատվելը» լեզվում կանխելու համար

Ինչո՞ւ են հայախոսները գործածում օտար բառեր: Պատճառները տարբեր են. օտար լեզուների ազդեցություն, օտարամոլություն, «նորածել» երեւալու ցանկություն, սեփական խոսքը չվերահսկելու հետեւանք: Բնական է օտար բառերի մուտքը լեզու, սակայն ընդունելի չէ դրանց ամրակայումը այն դեպքում, երբ կան եւ գործածելի են դրանց հայերեն համարժեքները: Օտարաբանությունների «հաստատվելը» լեզվում կանխելու համար շարունակում ենք հրապարակել օտար բառերի հայերեն համարժեքների նոր ցանկ եւ կոչ ենք անում գործածել հայերեն համարժեքները:

- 1. ասոցիատիվ – զուգորդական
2. դեմիլիտարիզացիա – ապառազմականացում
3. դեմոնստրացիա – 1. ցույց, 2. ցու-

- ցադրում, ցուցադրություն
4. դեմոնրալիզացիա – բարոյալքում, անբարոյացում
5. էկիպաժ – անձնակազմ
6. էվակուատոր – ավտոբարշակ
7. էքստրաօրդինար – 1. արտասովոր, արտակարգ, անսովոր, 2. տարօրինակ
8. թաքս – հարկ, տուրք
9. թեոկրատիա – կրոնապետություն (աստվածապետություն)
10. լուք – տեսք, արտաքին, դեմք
11. կինոլոգ – շնաբան
12. հիմն – օրհներգ
13. մազուլ – կոշտուկ
14. մոնարխիա – միապետություն
15. սպոնսոր – հովանավոր
16. վերդիկտ – դատավճիռ, վճիռ
17. վիդեո – տեսագրություն, տեսանյութ

- 18. վիդեոլու – տեսազանգ
19. վյու – 1. տեսարան, 2. դիտում
20. տավտոլոգիա – 1. կրկնաբանություն, 2. նույնաբանություն
21. տեմպերամենտ – 1. խառնվածք, բնավորություն, 2. ավյուն
22. տոմոգրաֆիա – շերտագրություն
23. տորշեր – ձողաջահ, հատակաջահ
24. տրագեդիա – ողբերգություն
25. տրիբունալ – դատարան
26. տրիումֆ – 1. հաղթանակ, հաղթություն, հաղթահանդես, հաղթատոն
27. քոլ – հեռախոսազան.
28. քոնթենթ / կոնտենտ – 1. բովանդակություն, 2. պարունակություն
29. ֆիկցիա – հորինվածք (մտացածին բան)
30. ֆլեքսիբլ – ճկուն, հարմարվող

Հայերենը պետք է պահպանենք ու զարգացնենք մենք՝ հայերս

Օտար բառերի հայերեն համարժեքների հերթական ցանկով հիշեցնում ենք, որ հայերեն համարժեքների հաղթանակը ապահովում ենք մենք՝ լեզվակիրներս՝ մեր խոսքում շունչ տալով եւ գործածելով դրանք:

- Նպաստենք հայերենի պահպանմանն ու զարգացմանը:
1. ամնիստիա – համաներում
2. անեքսիա – բռնակցում
3. անսամբլ – հանույթ
4. գրավիտացիա – ձգողականություն
5. դեբատ – բանավեճ, քննարկում
6. դեկլոնիզացիա – ապագադուրաքանում
7. դիագրամ(ա) – գծապատկեր

- 8. էմպատիա – ապրումակցում
9. ինստրումենտ – գործիք
10. լեզալիզացիա – օրինակականացում
11. լիմիտացիա – սահմանափակում
12. կալեդոսկոպ – գեղադիտակ
13. կալիգրաֆիա – վայելչագրություն, գեղագրություն
14. կանիբալ – մարդակեր (նաեւ կենդանի, որը ուտում է իր տեսակի այլ կենդանու)
15. կասսա – դրամարկղ, գանձարկղ
16. կուրսոր – նշորդ
17. մետրոլոգիա – չափագիտություն
18. մոլտիկուլտուրալիզմ – բազմամշակութայնություն
19. մալոգ – հարկ
20. շվեյցար – դռնապան, բարապան

- 21. պիրատ – ծովահեն
22. պլյաժ – լողափ
23. պոզիցիա – 1. (ռազմ.) դիրք, դիրքավորում, 2. տեսակետ, դիրքորոշում, 3. կեցվածք
24. ռեաբիլիտացիա – վերականգնում
25. սիրոպ – օշարակ
26. ստադիոն – մարզադաշտ
27. ստավկա – խաղադրույք, 2. դրույք
28. տրանսֆեր – 1. փոխանցում, 2. տեղափոխություն
29. քսենոֆոբիա – 1. այլատյացություն, 2. օտարամերժություն, այլամերժություն (անբարեհաճություն՝ թշնամանք անեն մի օտարի հանդեպ)
30. քսերոկոպիա – պատճեն

Նպաստենք հայերենի անաղարտությանը

Զարգացող աշխարհում բնական եւ անհրաժեշտ են միջազգային շփումները, իսկ լեզուների իմացությունը հաջողելու գործիքներից է: Աշխատանքային հարաբերություններում անհարկի կիրառվող օտար բառերն ու արտահայտությունները գործածողների «ծուլությանն» պատճառով ներթափանցում են մայրենի լեզու, ապականում այն: Սխալ պատկերացում կա, թե խոսքում օտար բառեր ներառելը տպավորություն է գործում ղեկավարների, գործընկերների կամ այլոց վրա, իբր կրթվածության եւ զարգացածության ցուցիչ է: Խոր մոլորություն:

- Ներկայացնում ենք օտար բառերի հայերեն համարժեքների ցանկ:
1. ավտոկրատիա – ինքնակալություն
2. բիբլիոգրաֆիա – 1. մատենագիտություն, 2գ գրականության ցանկ

- 3. բիոլոգ – կենսաբան
4. գեոլոգ – երկրաբան
5. դեյ օֆֆ – ազատ օր
6. ժիլետ – բաճկոնակ
7. ինդիվիդուալ – անհատ
8. ինիցիատիվ(ա) – նախաձեռնություն
9. ինֆորմացիա (ինֆո) – տեղեկություն, տեղեկույթ
10. լայք – հավանում, հավանություն
11. լիդերշիփ – առաջնորդություն
12. լոքեյշըն – տեղ, վայր
13. խրոնոմետրաժ – ժամանակաչափում
14. կոմիքս – պատկերապատում
15. կվալիֆիկացիա – որակավորում
16. մոնստր – հրեշ
17. նունիզմատիկա – դրամագիտություն
18. շեյր – կիսում, տարածում

- 19. պացիֆիզմ – խաղաղասիրություն, խաղաղապաշտություն
20. պերֆեկցիոնիստ – կատարելապաշտ
21. պոլեմիկա – բանակռիվ, բանավեճ
22. պրոզոնոգ – կանխատեսում, կանխատեսություն, նախագուշակում
23. պրոդուկցիա – արտադրանք
24. ռեգիստրացիա – հաշվառում, գրանցում
25. ռիփորթ – զեկույց, հաշվետվություն
26. ռուպոր – բարձրախոս
27. սեյվ – պահպանել
28. ստաբիլիզատոր – կայունարար
29. վականսիա – թափուր աշխատատեղ, պաշտոն
30. ֆատալիզմ – ճակատագրապաշտություն

Մայրենի լեզուն՝ ժամանակին համաբայլ

Ոմանց թվում է, թե հայերեն ընդունելի համարժեքներ ունեցող օտար բառեր գործածելով իրենք «ժամանակակից» են դառնում: Սակայն, այդպես չէ: Զարգացած պետություն ունենալու կարելուր նախապայմաններից է մեր մայրենի լեզուն ժամանակին համաբայլ պահելը:

- Ներկայացնում ենք օտար բառերի հերթական ցանկը եւ հորդորում գրավոր ու բանավոր խոսքում շրջանառության մեջ դնել դրանց հայերեն համարժեքները:
1. ադմիրալ – ծովակալ

- 2. անբիցիա – հավակնություն, նկրտում
3. անպլիտուդա – լայնույթ
4. անեմիա – սակավարյունություն
5. անտիթեզ – հակադրույթ
6. ապոստրոֆ – ապաթարց
7. ավտոմատ – 1. ինքնաձիգ, 2. ինքնաշխատ, 3. մեքենայորեն/մեքենաբար
8. բիբլիոգրաֆիա – մատենագիտություն
9. գիրլանդա – դրասանգ, ծաղկաշղթա
10. դինաստիա – արքայատոհմ, հարստություն
11. դուբլիկատ – կրկնօրինակ

- 12. էքնոգրաֆիա – ազգագրություն
13. էսթետիկա – գեղագիտություն
14. էվֆեմիզմ – մեղմասություն
15. էքսպլուատացիա – շահագործում
16. էքստրասենս – պայծառատես
17. լիմֆատիկ – ավշային
18. լոգոսիա – տարբերանշան, պատկերանիշ
19. կարիկատուրա – ծաղրանկար
20. կրիպտոգրաֆիա – գաղտնագրություն
21. մոզաիկա – խճանկար



- 22. պանտոմիմա – մնջախաղ
23. պաուզա – դադար
24. սանատորիա – առողջարան
25. սոցիում – հանրույթ
26. ստադիա – փուլ, շրջան
27. ստերիլիզացիա – 1. մանրէազերծում, 2. վարակազերծում, 3. ստերիլացում, անլացում
28. ստյուարդեսա – ուղեկցորդուհի (օդանավի)
29. տելեսկոպ – աստղադիտակ
30. տրագեդիա – ողբերգություն



Հովհաննես ԹՈՒՄԱՆՅԱՆ

\* \* \*

Թեպետև բախող մեզ շատ հարվածեց  
երկար դարերով, ահեղ հարվածով,  
Թեպետև էսպես ցովեց, տարածեց,  
Չըզեց հողեհող, փրմեց ծովեծով,

Վկա է սակայն բովանդակ երկիր,  
Որ մենք կարեվեր ապրում ենք կրկին,  
Եվ ուր հասնում է հայի գիրքն ու գիր –  
Կենդանի է դեռ հայության ոգին:

Եվ թարմ աղմուկով մանկունք մեր մատաղ  
Առաջ են խաղում լուսավոր տենչով,  
Եվ թնդում են դեռ հայի երգն ու տաղ  
Հարազատ լեզվով, հայրենի շընչով:

Եվ իր փըլատակ տըրների տակից  
Ելնում է ահա հզոր ժողովուրդ,  
Իր վեհ ճակատին տանջանք ու թախիծ,  
Խորունկ հայացքում մեծ կյանքի խորհուրդ:

Ո՛վ դուք սրբազան Մասիս, Արագած,  
Էդ ձեր երկնամուխ գոհար թագերով,  
Եվ որ նրանցից վերև խոյացած  
Փայլատակում եք լույս – պըսակներով –

Սահակ ու Մեսրոպ, եւ շատ պանծալիք,  
Որ լըցրիք Հայոց աշխարհքն ու սրտեր  
Լուսավոր կյանքի սիրով երջանիկ  
Ու ձըզտում տըվիք – ձըզտել դեպի վեր,

Քանի որ դուք կաք, քանի կըմնաք,  
Հոյակապ սյուներ հայության ոգու,  
Մենք միշտ անսասան առաջ տի գմանք,  
Ինչքան մեր ճամփան լինի ահարկու:

Եվ տոն կըտոնենք էսպես խնդագին,  
Եվ թող իմանա բովանդակ երկիր –  
Ապրում է անմեռ հայությունը հին,  
Ապրում են անմահ իրեն գիրքն ու գիր:



Մուշեղ ԻՇԽԱՆ

Հայ լեզուն տունն է հայուն

Հայ լեզուն տունն է հայուն աշխարհիս չորս ծագերուն,  
Ուր կը մտնե ամեն հայ իբրև տանտեր հարազատ,  
Կ'ստանա սեր ու սնունդ, սրտի հպարտ ցնծություն,  
Եվ բորյանեն ու բուքեն հոն կը մնա միշտ ազատ:

Քանի՜ դարեր եւ քանի՜ ճարտարապետ հանճարներ  
Աշխատեցան անոր տալ վեհություն, գեղ ու պերճանք,  
Քանի՜ գեղջուկ բանվորներ տընեցան տիվ եւ գիշեր,  
Որոնք թաղված են հիմա մոռացության մութին տակ:

Մշտանորոգ ու միշտ հին՝ ան կը տեսե դարեդար,  
Իր ճրագները՝ միշտ լույս, իր օջախին հուրը՝ վա՛ռ,  
Բարիքներով անսպառ լեցուն ամբարն ու մառան:


Հո՛ն է միայն, որ կրնա գտնել ամեն հայ կրկին  
Խաժամուժի մեջ օտար կորսնցուցած իր հոգին,  
Անցյալն անհուն եւ ներկան, նույնիսկ մթի՛ն ապագան...

Ավետիք ԻՍԱՀԱԿՅԱՆ

Հայրենիքիս

Յորենի ծրփուն արտերի եզրին  
Կանգնել խորհում եմ սրտիս մեջ լռին. –  
Մի՞թե դու չիր, հայրենիք իմ հեզ,  
Որ թայգաներից, յուրդերից մթին  
Հորդացող - եկող ելուզակների  
Բյուր սլաք ու նետ, բյուր միզակ ու տեգ  
Սրտիդ մեջ մեխված ընկել էիր խեղճ  
Քառուղու վրա բախվող ազգերի,  
Դաժան դարերի մղձավանջի մեջ  
Սմբակների տակ խոլ նծույզների,  
Եվ սրում էին ճիչով չարախինդ  
Անգղներն իրենց կտուցները վես  
Քո արեակեզ ժայռերի վրա  
Հոշոտելու քեզ...

Եվ սակայն հիմա,  
Դու՛ն նորից ծաղկել, ցնծում ես նորից,  
Ելնում է ծովի խրճիթներից հին,  
Ուր մայրը՝ անուշ օրորել է ինձ,  
Իմաստավորել մանուկ իմ հոգին  
Քո հզոր լեզվով, երկիր կաթոգին:  
Այնքան ժամանակ, որ պիտի հերկե  
Սեւահողը հին՝ քո կտրիճ որդին,  
Եվ գուսանըդ վա՛ռ՝ սերըդ պիտ երգե,  
Դու պիտի ծաղկես, երկիր հայրական,  
Քո ոգով, ոճով եւ բարձրազլուխ  
Դու պիտի հնչես, հնչես հաղթական,  
Իմ հի՛ն հայ լեզու՛ն՝ քա՛ղցր ու սրտաբու՛լիս:



Վահան ՏԵՐՅԱՆ


\* \* \*

Մի՞թե վերջին պոետն եմ ես,  
Վերջին երգիչն իմ երկրի,  
Մա՛հն է արդյոք, թե մի՞նջը քեզ  
Պատել, պայծա՛ռ Նաիրի:

Հնչում է միշտ խոր ու պայծառ,  
Եվ խոցում է, եւ այրում.  
Արդյոք բոցե վարդե՞րդ են վառ,  
Թե՞ վերքերն իմ հրահրուն:

Վտարանդի երկրում աղոտ,  
Լուսե՛ր, քեզ եմ երագում,  
Եվ հնչում է, որպես աղոթք,  
Արքայական քո լեզուն:

Ահով ահա կանչում եմ քեզ՝  
Ցուլա՛, ցնորք Նաիրի. –  
Մի՞թե վերջին պոետն եմ ես,  
Վերջին երգիչն իմ երկրի...



Եղիշե ՉԱՐԵՆՅ

Մեր լեզուն

Մեր լեզուն ձկուն է ու բարբառոս,  
Առնական է, կոպիտ, բայց միեւնույն պահին  
Պայծառ է նա, որպես մշտաբորբոք փարոս,  
Վառված հրով անշեջ դարերում հին: -

Եվ վարպետներ, խոնարհ ու հանճարեղ,  
Հղկել են այն դարեր, որպես մարմար,  
Եվ փայլել է նա մերթ, ինչպես բյուրեղ,  
Մերթ կոպտացել, ինչպես լեռնային քար: -

Բայց միշտ պահել է նա իր կենդանի ոգին, -  
Եվ եթե մենք այսօր կտորատում ենք այն մերթ –  
Այդ նրանից է, որ ուզում ենք մեր  
Նոր խոհերի վրա ժանգ չչորի: -

Այդ նրանից է, որ մեր այսօրվա ոգուն  
Այլևս չի կարող լինել պատյան  
Ո՛չ Տերյանի բարբառը նվագուն,  
Ո՛չ Նարեկի մրմունջը մազաղաթյա: -

Եվ ո՛չ անգամ Լոռու պայծառ երգիչ  
Թունանյանի բարբառը գեղջկական, -  
Բայց նա կգա - լեզուն այս երկաթյա բերքի  
Եվ խոհերի այս խո՛ր ու երկրակամ...



Համո ՍԱՅԱՆ

\* \* \*

Մեր լեզուն մեր խիղճն է դա, Սուրբ հացը մեր սեղանի, Մեր հոգու կանչն է արդար Ու համը մեր բերանի:

Մեր լեզուն արյունն է մեր, Արյունից ավելի թանկ, Մեր բուրմունքն ու գույնն է մեր, Մեր լեզուն մենք ենք ու կանք:

Մեր լեզուն ծուխն է մեր տան, Մեր կշիռն աշխարհի մեջ, Նա աղն է մեր ինքնության, Էության խորհուրդը մեծ:

Նա պիտի մեր առաջին Ու վերջին սերը լինի, Ի՞նչ ունենք էլ աշխարհում, Որ այսքան մերը լինի:



Գեուրգ ԷՄԻՆ

Մեր այբուբենը

Այբուբեն չէ սա՛ր Բերդ է անմատուց, Գանձ է անմկաճ. Դուռ է փրկության, Ելք, երբ հույս չկա, Զարթոնքի նվագ: Էությունն է մեր, Ընթացքն ու ուղին, Թագ ու գորավար. Ժողովող մի կանչ, Իմաստուն խորհուրդ Լինելու հնար: Խարխիսը նավի, Ծառը դպրության, Կնիքն ինքնության, Հացն հանապազօր հայի սեղանի, Զիրքերի հնձան: Դողանջը երգի, ղեկը ընթացքի, Գեներալն ճառի, Մարգարան մտքի, մատյան հովատքի, Յուզ՝ անմար ջահի: Նախահիմքն է մեր,

Շողը մեր հույսի, Ոգին մեր ճարտար. Զինարին այգու, Պարիսպը մեր տան, Զրադացն արդար... Ռումբն է մեր ռազմի, ռունգը բնագրի, ռահվիրան փառքի, Մերն ու սիրտն է մեր, սերմը միշտ ծլող, Վե՛մ ու վիճագիր: Տունը ցամաքում, տապանը ջրում, Բոպեն սլացքում, Յորյանը արտում, Ուղին անհայտում, Փառքը սիրամբում: Քիստն ու քաղն է մեր, քանար ու քնար, քարավան ու ափ. Եվ Օջախն անմար, օժիտն անհատում, Ֆե-ից մինեւ Այբ:

Հովհաննես ՇԻՐԱԶ

Հայոց լեզուն

Մի հայրենադարձ պատանու

Մեսրոպ Մաշտոցն ասաց՝ որդիս, էլ ինչո՞վ ես հույսը բերդիս, - էլ հայրենիք ինչո՞ւ եկար, Թե պիտ խոսես օտար լեզվով, Խմես հայոց գինին նեկտար՝ Կենաց կանչես օտար լեզվով, Քաղես հայոց վարդերն ու հեզ Աղջիկ կանչես օտար լեզվով:

Իրավ, քանի լեզու գիտես՝ Այնքան մարդ ես՝ իրավն ասին, Բայց որ քո հայ լեզուն չունես, էլ ի՞նչ հույս ես քո Մասիսին, Որ թողել ես քո մայրենին՝ Հարամ է քեզ հայոց գինին, Հարամ է քեզ աղջիկն հայոց, Հայոց սիրտը՝ Մասիսն հայոց:

Մայր հայրենիքն էլ ի՞նչ սրտով Քո ոտքերն էլ գրկե վարդով... ... Ա՛խ, չէ, Մասիսն հալալ է քեզ, Հայոց վշտում դու մեղք չունես, Հալալ է քեզ հողն հայրենի, Թող քեզ ջուրն էլ դառնա գինի: Քանզի հայոց վայ սփյուռքում Պանդխտությունն է դեռ պոկում Հայ բերանից հայոց լեզուն, Օտարն հայոց մահն է ուզում...

Բայց նա է հայ, ով հովազի Արնախում երախումն էլ Իր մայրենի լեզվով խոսի, Մոր կաթի հետ ծծած լեզվով, Որ հայ գետը ծով ծին, ծով, - Ժխորում էլ Բաբելոնի Խոսի լեզվով իր մայրենի. Հայոց լեզվով, որ միշտ ջահել, Մեզ բյուր դարեր հայ է պահել:



Պարույր ՍԵՎԱԿ

Մայրենի լեզու

Դու մեր մեծ երթի գավազանակիր եվ մեր պատմության մեծագույն դիվա՛ն, Մեր ազնվության գովասանագիր, Մեր մտքի պահեստ, հոգու օթեւան: Անցյալին պարզված դու մեր լսափող, եվ մեր խոսափող՝ գալիքին ուղղված: Դու մեր սրբություն՝ կնքված Մեսրոպով, Նարեկացիով օծված ու յուղված:

Դաժան դարերի անձն մի ժամին Շա՛տ բան է խլել մեզանից թշնամին: Բարդելով վերքին վերք ու անարգանք, Հեծության վրա մի նոր հեծություն էլ էլ մեզանից փառք ու մեծություն, Խլել կյանքը մեր եւ... կյանքի՞ց էլ թանկ Մեր հո՛ղը, հո՛ղը, Մեր սուրբ հայրենի՛ն:

Շա՛տ բանից է մեզ գրկել վայրենին: Մեր կերած հացին քսել է նա ժա՛նգ, Բայց եւ... դարավոր բնիկ վայրերի Կորզստի լեզի կարո՛ւն է քսել, Մեր խումբին խառնել մեր սուրբ մայրերի Արցո՛ւնը, սակայն... եւ արյո՛ւնը սեւ, Բայց մենք չենք գրկվել... մեր բերնի համից. - Քաղցրացել ենք մենք... մեր քաղցր բառով, Մեր հայրենահամ անուշ բարբառով:

Շա՛տ բանից է մեզ գրկել թշնամին: Իր ձեռքով նա մեր ձեռքերն է հատել, Հատել է ականց ու ոտնաթաթեր, Աչքեր է հանել դաշույնով իր սուր, Կտրել է նաեւ արմատից լեզուն, Եվ սակայն... ի՞՞՞ր. Զի՛ հատվել լեզուն, Մնացել է նա՛ հատվելով անգամ...

Քեզ՝ մեր հայկական եւ արամական, Չկարողացան քեզ խլել մեզանից Ո՛չ խարդավանքով արամեական,

Ո՛չ բյուզանդական սիրով անազնիվ, Ո՛չ Արիմանի ահեղ նետերով, Ո՛չ Քրիստոս մարդ - չմարդությանը, Ո՛չ Մուհամեդի ծմլիչ ոտերով. Ո՛չ ճշմարտությանը, Ո՛չ էլ ստերով:

Չկարողացան քեզ մեզանից խլել: Եվ պարզ է հիմա, հստակ ու որոշ, Որ չէ՛ն էլ կարող քեզ մեզանց խլել, Ինչպես չեն կարող խլել մի դրոշ, Որ հազարամյա դաժան մարտերում Փողփողացել է միշտ էլ... սրտերո՛ւն: Ո՛չ, քեզ ո՛չ մեկը կուլ տալ չի՛ կարող. Ազահ կոկորդոսն դու խոր ես խրվում: Ո՛չ, քեզ ո՛չ մեկը փուլ տալ չի՛ կարող, Ինչպես երկինքը երբեք չի փլվում: Չե՛ս խլվի երբեք, Չե՛ս փլվի երբեք, Ինչպես արյունից գո՛ւյնը չի խլվում...

Եվ ի՞նչ խաչագող դեռ պիտի հասնի, Որ քեզ կամենա գողանալ մեզանից (Մի՛ ասա «մեզանից», «աշխարհի՛ց» ասա), Չէ՛ որ դու հիմա ոչ միայն լեզու, Այլև մասո՛ւնք ես, Մասո՛ւնք ես մի սուրբ, Անկողոպտելի մասո՛ւնք սրբազան՝ Դարերի խորքից դարերին հասած:

Մասո՛ւնք: Ինչպե՛ս թե: Մասունքը ո՛րն է: Մասունքի տեղը տուլիսն է կամ հորն է: Իսկ դու՛ դարավոր, բայց եւ առույգ ես, Գիսավոր ծուխ ես, բայց եւ խարույկ ես, Ինչքան պարզ՝ նույնքան ասպետական ես, Շատերի մեջ ես, բայց պետական ես, Եվ դրանով իսկ դու պետքական ես Այն պետությանը, որ վաղը պիտի Լուսնից ու Մարսից ինքն իրեն դիտի...



Սիլվա ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ

Խոսք իմ որդուն

Այս գարնան հետ, այս ծաղկունքի, Այս թռչնակի, այս առվակի, Հետո այս երգի ու գարթոնքի Բացվեց լեզո՛ւն իմ մանկիկի: Ու թոթովեց բառ մի անգին Նրա կարկաշը դարավոր... Ասես մասունք հաղորդության Դիպավ մանկանս շրթունքին...

- Լսիր, որդի՛ս, պատգամ որպես Սիրող քո մոր խո՛սքը սրտանց, Այսօրվանից հանձնում եմ քեզ Հայոց լեզո՛ւն հազարագանձ: Կտրել է նա, հանց աստղալույս, Երկինքները ժամանակի, Շառաչել է խռովահույզ Սլացքի հետ հայկյան նետի, Եվ Մեսրոպի սուրբ հանձարով Դարձել է գիր ու մագաղաթ, Դարձել է հույս, դարձել դրո՛շ, Պահել երթը մեր՝ անաղարտ... Նրանո՛վ է մրմնջացել Հայ պանդուխտը վերքն իր սրտի,

Նրանով է որոտացել Կովի երգն իմ ժողովրդի, Նրանով է մայրս ջահել Ինձ օրորոց դրել մի օր, Հիմա եկել, քե՛զ է հասել Նրա կարկաշը դարավոր... Բա՛ց շուրթերդ, խոսի՛ր, անգին, Ժիր դայլայլի՛ր, ի՛մ սիրասուն, Թող մանկանս՝ քո շուրթերին Մեր ալեհե՛ր հայոց լեզուն... Պահիր նրան բարձր ու վճիտ, Արարատի սուրբ ձյունի պես, Պահիր նրան սրտիդ մոտիկ, Քո պապերի աճյունի պես, Ու ուտիսի զարկիցը սեւ Դու պաշտպանիր կրծքով նրան, Ինչպես մորդ կպաշտպանես, Թե սուր քաշեն մորդ վրա.

Ու տե՛ս որդի՛ս, ո՛ր էլ լինես, Այս լուսնի տակ ո՛ւր էլ գնաս, Թե մո՛րդ անգամ մտքից հանես, Քո մա՛յր լեզուն չնռանա՛ս...



Կարդա՛ եւ ծանոթացրո՛ւ

Վաթսուականների արձակագիրներ. ժամանակը եւ հերոսը

«Անհրաժեշտ է հիմնավորապես գիտակցել, որ գրականության բոլոր տեսակներից արձակը ամենաթիչ գեղարվեստականն է: Իսկական գրականությունը միայն պոեզիան է: Արձակը գրականության մեջ տեղ ունի սուկ իրենում բովանդակած պոեզիայի շնորհիվ:

Արձակագրի մեջ բանաստեղծն առանձնապես չպետք է ուժեղ լինի»:

Ակուտագավա Ռյունուկե

«Տասը օրենք գրողների համար»

Ա.

Չերոսի խնդիրը բոլոր ժամանակների գրականության հանգուցակետն է, որովհետեւ ժամանակն իր մեջ խտացնող հերոսով միայն կարելի է իմաստավորել եւ պատմականորեն գրանցել տվյալ շրջափուլը: Այս հարցն ամբողջ սրությամբ դրված է գրականության առջեւ: Երբ գրավելով ոչ միայն գեղարվեստ ստեղծողներին, այլեւ տեսական-գեղագիտական-փիլիսոփայական միտքն ուղղորդողներին:

Ժամանակի ընթացքում հանրային կյանքի եւ գիտակցության հետ մեկտեղ փոփոխության է ենթարկվում նաեւ գրականության հերոսը: Գրականության հերոսի պատմական զարգացումը երկարատեւ ու աստիճանական փոփոխությունների անընդմեջ ընթացք է, որ բանախոսական ու գրական նյութերի շուրջ երեքհարյուրամյա ընթացքի միջով աստվածներից ու կիսաստվածներից, թագավորներից ու իշխանավորներից ահա եկել հասել է մինչեւ այսօրվա սովորական, առտնին մարդը:

Գրական հերոսի խնդիրը պայմանավորված է ժամանակի հանրային, պատմաքաղաքական եւ պատմամշակութային դրվածքով: Ըստ այդմ իշխող գրական մեթոդն ու գեղագիտությունը ժամանակի տարբեր փուլերում ընդհանուր գաղափարական հիմքի պահպանումով հանդերձ, դրսևորում են նրբերանգային առանձնահատկություններ՝ առաջ մղելով ժամանակի պատմական տարբեր փուլերին հատկանշական հերոսի նկարագիր:

Այսպես, խորհրդային գրականությունը թեւեւ ընդգրկում է պատմական կարճ ժամանակաշրջան, այնուամենայնիվ, պայմանավորված ժամանակի գլխավոր իրադարձություններով, փոխվել են այդ հերոսին ներկայացվող գաղափարական պահանջները: Քաղաքացիական կյանքի պատմությունն ստեղծում է այդ պատմության զարգացման ընթացքին հատկանշական կերպարներ: Խորհրդային իրականության առաջին տարիներին գրականության գլխավոր հերոսը հեղափոխականն էր, քաղաքացիական պատերազմի մասնակիցը: Այնուհետեւ 1920-ականներին այդ հերոսը դառնում է տնտեսությունը կարգավորող, հանրային նոր հարաբերություններ ձեւավորող, անցյալի մնացուկները հաղթահարող կուսակցական գործիչը: 1920-ականների վերջերին Չարություն Սուրխաբայանն այդ հերոսի մասին գրում էր. «Պրոլետարական գրողի գլխավոր խնդիրներից մեկը պետք է լինի վերարտադրել մեր օրերի առաջավոր հերոսին, սոցիալիստական հասարակական շինարարին, սակայն, առանց աչքաբոլոր անելու նրա ունեցած կարգապահական թելերը իր միջավայրի հետ, եւ այն, որ այդ հերոսը, օժտված լինելով պրոլետարիատի բազմաթիվ դրական կողմերով, ազատ չէ նաեւ անցյալից ժառանգած քննադատելի մի շարք գծերից» (Չ. Սուրխաբայան, Չետոկտեմբերյան հայ գրականություն, Թիֆլիս, 1929, էջ 41):

1930-ականներին այդ հերոսը դառնում է երկրի տնտեսությունը սոցիալիստական հիմքերի վրա կառուցող, կոլեկտիվացումն ու երկրի ինդուստրացումը ղեկավարող, սոցիալիստական շինարարությունը ձախողողների դեմ անձնագոհորեն պայքարող պետական-կուսակցական գործիչը: Պատերազմի տարիներին այդ հերոսը հայրենիքի համար կռվող զինվորն էր, զինվորին քաղաքական հասունության կոչող քաղղեկը: Պատերազմից հետո ավերված տնտեսությունը վերականգնող նախկին զինվորը, ով այժմ դառնում էր կոլտնտեսության նախագահ, որեւէ հիմնարկության ղեկավար կամ գաղափարական աշխատող:

Այս հարցերի հետ մեկտեղ, որոնք առնչվում են ԽՍՀՄ-ի պատմական զարգացման գլխավոր հանգույցներին, գրականությունն անդրադարձել է նաեւ բազմաթիվ այլ կարեւոր խնդիրների, որոնց հիմքում ընկած են ժամանակի մարդու հոգեբանական, բարոյական նկարագրի, անհատական կյանքի ու ներաշխարհի բացահայտման առանձնահատկությունները:

Երբեք չմոռանանք՝ խորհրդային իրականության պայմաններում միշտ եղել է երկու գրականություն. մեկը այն, որ կատարում էր պետական-պաշտոնական գաղափարական հանձնարարությունները, մյուսը՝ համեմատաբար ազատ եւ հեռու այդ հանձնարարությունների պահանջատերը լինելուց, ինչն աստիճանաբար վերածվեց գաղտնի կամ բացահայտ ընդդիմության: Այսինքն՝ խորհրդային գրականությունը մշտապես ունեցել է մի քանի երես՝ արտաքին-պաշտոնական, ներքին՝ ոչ պաշտոնական, ի վերջո, ընդդիմադիր:

1950-ականների վերջերին եւ հատկապես 1960-1970-ականների նկատելի անցում է կատարվում դեպի չգաղափարականացված, առօրեական, սովորական, շարքային մարդու պատկերումը, ով, ըստ էության, աչքի չի ընկնում մեծագործություններով ու հերոսություններով: Գրականության մյուս եւս դառնում նրա անհատական կյանքը, խոհերն ու հոյակերը: Նյութի փոփոխությունը փոխում է նաեւ գրականության հերոսի տեսակն ու նկարագիրը: Գրականության հիմնական նպատակը դառնում է արդիական նյութի գեղարվեստական յուրացումն ու ժամանակակից հերոսի կենսահոգեբանական առանձնահատկությունների բացահայտումը:

Այս կողմնորոշումը մղում է առաջադրելու մի շարք հարցեր. ո՞վ է ժամանակի, այսինքն՝ 1960-1980-ականների գրականության հերոսը, ի՞նչ տվյալներով է աչքի ընկնում, ինչքանով է կրում կյանքի կենդանի լիցքերը, ինչպե՞ս է իր մեջ կրում ժամանակը, ի՞նչ հարցեր են մտահոգում նրան, ինչպե՞ս եւ ինչքանով է իմաստավորում եւ ընդհանրացնում կյանքը:

Այս հարցերին միանգամից պատասխանելու եւ անհնարին է, եւ սխալ: Այդ հարցերի պատասխանը պետք է տա գեղարվեստական արձակը:

Ժամանակն ստեղծում է աշխարհընկալման միասնական հոսանքներ, այսպես կոչված սերնդային միասնական հոգեբանություն, ինչն ակնհայտ է արձակի այն ներկայացուցիչների ստեղծագործության մեջ, որոնց ասում ենք 60-ականների սերունդ, այսինքն՝ գրողներ, ովքեր խորհրդային իրականության մեջ գրական ասպարեզ մտան 1960-ականների շատ ու շատ կողմերով բարենպաստ ժամանակներում, այլ կերպ՝ Ստալինի պաշտամունքի վերջնական հաղթահարման, խրուշչովյան ձեւալի, գաղափարական սահմանափակումների թուլացման եւ համեմատաբար

ազատ մտածողության երկար սպասված տարիներին:

Վաթսուականների սերունդի ներկայացուցիչները բերում էին գրական հերոսի իրենց նախասիրած տարբերակը, կյանքի իրենց ըմբռնումն ու կյանքի խորքերի բացահայտման իրենց սկզբունքները: Տարբեր են նաեւ գրական հնարավորությունները եւ անհնար է մեկ ընդհանուր հայտարարի բերել գրական այն վաստակը որ ստեղծել են մի կողմից բուն 1960-ականների սերունդի ներկայացուցիչները՝ Չրանտ Մաթեոսյանը, Վարդգես Պետրոսյանը, Ջորայր Խալափյանը, Պերճ Զեյթունցյանը, Մուշեղ Գալշոյանը, Չովհաննես Մելքոնյանը, Աղասի Այվազյանը, Ռուբեն Չովսեփյանը, Նորայր Աղայանը, Վահագն Գրիգորյանը, Ալեքսան Մեխակյանը, մյուս կողմից՝ ավելի վաղ հանդես եկած եւ այս շրջանում իրենց լիարժեքորեն բացահայտած ավագները՝ Սերո Խանգաղյանը, Մկրտիչ Սարգսյանը, Անահիտ Սահինյանը, Ստեփան Ալաջաջյանը, Խաժակ Գյուլնազարյանը, Չովհաննես Դուկասյանը, Միքայել Շափրյանը, Գեղամ Սեւանը, Աբիգ Ավագյանը, Վալտեր եւ Ռաֆայել Արամյանները, Բաղիշ Չովսեփյանը եւ ուրիշներ:

Կքննարկենք միայն առաջին խմբի գրողների երկերը:

Մինչ այդ, անհրաժեշտ է պարզել եւս մեկ հարց՝ կենսական ի՞նչ նյութ է շրջանառության մեջ դրվում այս գրողների կողմից, ինչն էլ պայմանավորված գրական հերոսի նկարագրով: Այնուհետեւ հարկավոր է այդ կերպարը հարաբերության մեջ դնել իրականության կենսական հարստության հետ եւ ճշտել կենսական նյութի գրական յուրացման ի՞նչ սկզբունքներ են գործում ժամանակակից արձակում եւ արդյոք ամբողջությամբ է հայտնաբերված ժամանակի հերոսի լիարժեք կերպարը, իսկ եթե չի հայտնաբերված, հապա ով է նա, ինչ վիճակներ է ապրում եւ ի՞նչ կենսափիլիսոփայություն է հատկանշական նրան:

Գրականության մեջ կյանքի զարգացման աստիճանի ապահովումը հիմնականում պայմանավորված է այդ իրականությունն իր մեջ կրող անհատի եւ համապատասխան նյութի առկայությամբ: Չերոսի տեսակի, նրա ներաշխարհի բացահայտման սկզբունքների, նրա ապրած վիճակների ու հարաբերությունների գեղարվեստական յուրացմամբ էլ ճշտվում է գրողի ասելիքն ու դիրքորոշումը: Այս առումով ճիշտ է Անատոլի Բոչարովը. «Նոր արվեստը երբեք չի սկսվում նոր ձևերից, այլ միշտ՝ նոր հերոսից: Այս հայտնի ձևակերպումը ցույց է տալիս ոչ միայն բովանդակության առաջնայնությունը ձևի համեմատ, այն հերոսի կերպարի մեջ հաստատում եւ կիսակենտրոն է հասարակական իրականության դիալեկտիկական միասնությունն ու հեղինակային հայեցակետը» (А. Бочаов, Требоваельная любовь (Концепция личности в современной советской прозе, М., Худлит., 1977, с. 11): Չարցի դրվածքը հայ արձակին նվիրված հոդվածներից մեկում (1971) այդպես է ներկայացնում նաեւ Սերգեյ Սարինյանը. «Չիմնական հարցը, որ տեսական ու գործնական իր ամբողջ նշանակությամբ է առաջադրվում, գրականության արդիականությունն է: Խնդիր իմաստը տվյալ դեպքում հանգում է ոչ միայն եւ ոչ այնքան պոետիկական ինչ-ինչ ձևերի յուրացմանը, ինչպես ենթադրում են «նորարարության» որոշ երկրպագուներ, որքան թեմայի, գլխավոր հերոսի եւ գեղագիտական իդեալի որոնումներին» (Ս. Սարինյան, Քննադատությունը եւ գեղարվեստական զարգացումը, 1973, էջ 151):

Թվարկված գրողների շրջանառու նյութ

թը բավականին հարուստ է ու բազմակողմանի. ընդգրկում է ժամանակի գյուղն ու քաղաքը, 20-րդ դարի համամարդկային հետաքրքրություններ կայացնող, նաեւ տեղական նշանակություն ունեցող որոշ կարեւոր հարցեր, ժամանակի բարդ հոգեբանական կյանքով ապրող մարդն ու այդ մարդու հիշողության մեջ բեկված պատմությունը (հիմնականում 1915 թվական, երկրորդ համաշխարհային պատերազմ): Նյութի այս ոլորտի մեջ ամեն մի գրող ստեղծում է իր նրբերանգը, ասելիքի վերարտադրման իր եղանակը:

Վաթսուականների արձակում բավականին հաղթահարվել է սխեմատիզմը. չկան նախապես տրված կամ պարտադրված կաղապարներ, գրողի ընտրությունն ազատ է, իսկ վերարտադրման հնարավորությունը՝ անսպառ: Այս ազատության պայմաններում սխեմատիկ կերպարներից, ամեն ինչ համահարթեցնող ու ինքնուրույնությունը թուլացնող գաղափարական կարծրատիպերից անցում է կատարվում անհատականությունների պատկերմանը: Անձնավորությունը վերցվում է իր անհատական կյանքի համակցական կապերի մեջ, ինչը եւ նպաստում է տիպային դաջվածքից անցնելու հոսող կյանքի պատկերմանը, կյանքի հորդումը գրականության մեջ խարխուլում է պատրաստի կաղապարների շրջանակները. գրողներն իրենք են ստեղծում իրենց շրջանակները: Ստեղծագործական այս ազատությունը գնահատելի է գլխավորապես այն դեպքում, երբ արձագանքում է հանրային տրամադրություններին, անհատի մեջ խտացնում ընթացիկ կյանքին հատկանշական այն խոր եւ բարդ հարցադրումները, որոնք, յուրաքանչյուրի մեջ ունեցած իրենց անհատական դրսևորումներով հանդերձ, ունեն մեկ գլխավոր ակունք: Միայն այս պայմանով արդյունք կտա սխեմաների հաղթահարումը, հակառակ դեպքում գաղափարական կաղապարին կփոխարինի անհատական կյանքի ձանձրալի փորփրումը, որ այլ բան չէ, քան մտավոր ճահիճ:

Գրականության հանրային, ազգային, փիլիսոփայական, հոգեբանական հիմնական գծերը վերարտադրելու համար անհրաժեշտ է զտնել-հայտնաբերել ժամանակի եւությունն ու ոգին իր մեջ խտացնող հերոսին: Միայն ժամանակին բնորոշ բազմա-տեսակ ու հիմնական հատկանիշներն իր մեջ ամփոփող հերոսի ընտրությամբ կարելի է զտնել առանձնահատկությունների այն ամբողջությունը, ինչն այս ժամանակը պետք է տարբերի նախորդից, այս ժամանակի մարդուն (հերոսին) նախորդ ժամանակների մարդկանցից (հերոսներից):

Այսուհանդերձ, սուկ ժամանակին բնորոշ հերոսի հայտնաբերմամբ չեն սպառվում իրականության կարեւորությունն ունեցող խնդիրները, կան նաեւ այլ զուգահեռ իրողություններ, որոնք հարուստ հենք են ստեղծում գլխավոր վիճակների ու իրադրությունների համար: Բացի դա, ժամանակի համար կարեւոր նշանակություն է ստանում նաեւ արդիականության դիրքերից հին խնդիրների, թվում է, թե անցյալի գիրկն անցած հարցերի վերանայումն ու նորովի մեկնաբանումը: Կյանքը միագիծ, պարզունակ վիճակների, հարաբերությունների ու կապերի շարան չէ, ինչպես պատկերացնում են մեր որոշ գրողներ ու քննադատներ: Ժամանակակից մարդն ապրում է բազմաբնույթ վիճակներ ու հարաբերություններ, դրանցից մի քանիսը կարող են լինել գլխավոր-հիմնական, մնացածները՝ երկրորդական-լրացուցիչ, բայց՝ կարեւոր:

Չարունակությունը՝ էջ 11





# Վաթսուևականների արձակագիրներ. ժամանակը եւ հերոսը

սկիզբը՝ էջ 10

Այս առումով՝ ճիշտ են «Սովետական գրականություն» ամսագրի համար 2-ին զիջ Այթմատովի գրած հոդվածի հետևյալ մտքերը, որ նա արտահայտում է դրական հերոսի առիթով. «Չավանորեն դրական հերոսի էտալոն մշակելու փորձերը հիմնավորված չեն: Չավանորեն ամեն անգամ, ամեն մի նոր ստեղծագործության մեջ դա կլինի մի զարմանալի ծանոթություն մեր օրերի անթիվ հերոսական բնավորություններից մեկի հետ» (2. Այթմատով, Մեր գրականության եւ արվեստի անկյունաքարերը, «Սովետական գրականություն», այսուհետև՝ ԱԳ, 1973, թիվ 1, էջ 123): Այս կարծիքը հավաստի է ոչ միայն դրական հերոսի, այլև, ընդհանրապես, ժամանակակից գրականության հերոսի համար:

Մարդու կյանքն աներեւակայելիորեն հարուստ է, բարդ ու համադրական: Նույնիսկ միեւնույն մարդը տարբեր վիճակների ու հարաբերությունների մեջ կարող է տարբեր կողմերով ներկայանալ, անգամ երբեմն կարող է այնպես թվալ, թե միեւնույն մարդու մեջ տարբեր մարդիկ են ապրում, մեկ մարդը մի քանի մարդ է: Գրականության գլխավոր նպատակը պետք է լինի ժամանակի այդ բազմակողմանի մարդու լիարժեք, ամբողջական նկարագրի ստեղծումը: Բայց, մինչ այս հարցերի մեջ խորանալը, նախ, ժամանակակից արձակագիր ընձեռած հնարավորություններից ելնելով, փորձենք ճանաչել այսօրվա կյանքն ու այդ կյանքն իր մեջ կրող մարդուն՝ գրական հերոսին, առանձնացնել նրա բնավորությանն ու հոգեբանությանը բնորոշ կողմերը եւ ապա դա հարաբերության մեջ դնել կյանքի հետ ու պարզել այդ հերոսի կենսականության լիարժեքության աստիճանը: Փորձենք թափանցել ժամանակակից արձակագիրներից մի քանիսի աշխարհը եւ ճշտել նրանց ստեղծագործական առնչություններն այսօրվա կյանքի եւ իրականության հետ:

### Բ.

Մինչ առանձին հեղինակների անդրադառնալը՝ անհրաժեշտ է մտաբերել գրական այն բանավեճը, որ ծավալվեց այս արձակագիրների միջև 1960-ականների երկրորդ կեսին: Գրական ուշագրավ մի բանավեճ է, ինչի նպատակը ժամանակի հերոսի հիմնական նկարագրի հայտնաբերումն էր:

Նորագույն արձակագրի գաղափարն միտումնաբերված խոսակցությունն սկսվեց 1966-ին՝ Վարդգես Պետրոսյանի «Ինչպե՞ս ստանալ միջին ազգային կերպար» («Սովետական Չայնաստան» օրաթերթ, թիվ 287) եւ Չրանտ Մաթեոսյանի «Սպիտակ թղթի առջև» («Գրական թերթ», այսուհետև՝ ԳԹ, թիվ 42) հոդվածներով: 1968-ին այդ խոսակցությունն ընդունեց բանավեճային բնույթ. սկսվեց Վարդգես Պետրոսյանի «Չավասարում բազմաթիվ անհայտներով» հոդվածով («Գարուն», 1968, թիվ 3), ինչին արձագանքեցին Գեուրգ Արշակյանը («Աշխարհի հետ՝ բանականությամբ», ԳԹ, 1968, թիվ 35), Չրանտ Մաթեոսյանը («Այսպես կոչված գյուղագրության մասին», ԳԹ, 1968, թիվ 37), Պերճ Զեյնունցյանը («Սրո՞ւն, թե Բանտեղում: Չափանիշ», «Գարուն», 1968, թիվ 8), Նորայր Աղայանը («Եվս մի քանի անհայտներ», «Գարուն», 1968, թիվ 11): Մաթեոսյանի հոդվածի առիթով պատասխան խոսքով հանդես եկավ Պետրոսյանը «Չուտով եմ կներես անկեղծության համար, բայց...» (ԳԹ, 1968, թիվ 44): «Լիտերատուրայի Արմենիա» ամսագրի էջերում բանավեճին մասնակցեց նաև Սերգեյ Դարոնյանը («Ավանդներ եւ արդիականություն», 1968, թիվ 12):

Չիմնական սկզբունքային հարցերի պարզաբանման առումով՝ հատկապես

առանձնանում են Պետրոսյանի եւ Մաթեոսյանի հոդվածները:

